



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՏՆԱԿԱՆ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1884 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Է

20 ՅՈՒՆԻՍ 1884



Կ. ՊՈԼԵՍ

1884

ԳԻՒՆՆԻ ԱՁԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԳԻՒԱՆ

Տիգրան	Լ.Ֆ. Լնտի	Եւսուֆեան	Ա. Արեւոյե
Բրիտտոսուր	»	Ղազարոսեան	Բ. »
Յովհաննէս	»	Թորոսեան	Գ. »
Յովհաննէս	»	Աբշակունի	Ա. Արեւոյե
Յակոբ	»	Պօղնակեան	Բ. »

Չեռնասուրբեան Գիւան

Մասթէոս Եսկ. Իլմիրլեան Արեւոյե
 Գարեգին Վրդ. Թաթարեան
 Մարկոս Լ.Ֆ. Լնտի Աղարէգեանց

Գատիարակուրբեան Գիւան

Ռէթէոս Լ.Ֆ. Պէրպէրեան Արեւոյե
 Գէորգ » Ապտուլլահ
 Միքայէլ » Մամիկոնեան

Կալուսաձոց Գիւան

Բրիտտոս Լ.Ֆ. Ղազարոսեան Արեւոյե
 Յակոբ » Եէմէնիճեան
 Պօղոս » Թորգոմեան

Համարակալուրբեան Գիւան

Կարապետ Լ.Ֆ. Սըլվաճեան Արեւոյե
 Մկրտիչ » Ճանըմեան
 Գառնիկ » Յովակիմեան

Յարաբերուրբեան Գիւան

Յովհաննէս Լ.Ֆ. Թորոսեան Արեւոյե
 Ռուբէն » Պուլիուրեան
 Վիշէն » Օրմանեան

Իրասուրբեան Գիւան

Յովհաննէս ԲՆ. Մկրեան
 Յակոբ Լ.Ֆ. Լնտի Աբշակ
 Գարրիէլ » Նորատունիկեան

Նախամեռնուրբեան Գիւան

Մինաս Լ.Ֆ. Լնտի Չերաղ Արեւոյե
 Յովհաննէս » Աբշակունի
 Նշան » Պօյաճեան

Խմբագրուրբեան Գիւան

Հարարձում Լ.Ֆ. Լնտի Ալաճաճեան
 Յակոբ » Գուրգէն
 Կարապետ » Խիւժիճեան

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄՆ 1884 ԱՄԻ

Կ Ի Ս Տ Է.

20 ՅՈՒԼԻՍ 1884

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Սիմէօն Եպիսկոպոս Սէֆէրեան (Առժամայ).
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան Էֆէնտի Եուսուֆեան.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. — Ատենական դործողութիւնք.
- Բ. — Խնդիր Ս. Երուսաղիմայ պարտուց բարձման — Տեղեկագիր Ազգային վարչութեան (ԳՆԿՅ).
- Գ. — Շարունակութիւն վիճարանութեան ի վերայ Ազգային Կեդր. Ելմտացոյցի.
- Դ. — Առաջարկութիւն Ազգային վարչութեան Խառն Ժողովոյ ի մասին Առաջնորդական խնդրոյ.
- Ե. — Ընտրութիւն Գ.Ր Ատենագարի Ազգային Ժողովոյ.

Ատենը բացուեցաւ ժամը 2 1/2 ին 'ի ներկայութեան 23 երեսփոխանաց, որոց թիւն 51 ի յանգեցաւ ի վերջէ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՒԻՒՆԷՐ

1.

Վաւերացումն Զ. նստի ատենագրութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը հրաւիրեմ երես.

փոխան Էֆէնտիներն Զ. նստի ատենագրու.

թեան վրայ յայտնել իւրեանց զխողութիւնքն, եթէ ունին:

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. — Նիստ Զ. էջ 140, սիւնակ Բ. տող 29րդ. «Կրթութեան» պիտի լինի գրութեան, — էջ 141, սիւնակ Ա. տող 7րդ. «Եւ պետք» պիտի լինի պետք, — նոյն էջ, Բ. սիւնակ, տող 5րդ. «առաջարկին» պիտի լինի առաջարկին դիմալ. — էջ 143. սիւնակ Ա. տող 36րդ. «գանձել» պիտի լինի գանձուիլ. — նոյն էջ 40րդ. տող «կանխած» պիտի լինի գանձուած. — էջ 145, սիւնակ Բ. 35րդ. տողին մէջ «այստրիարքարանը բանջած» պիտի լինինք» խօսքին վերջը պիտի աւելնայ, «Պատ.

րիարքարանը բռնեղած պիտի լինինք առանց
կեղծոնական վարժարանը կարենալ շինելու :

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — Նախ դիտել կուտամ
թէ ներկայ ատենագրութեան մէջ իմ ատենարան-
նութիւնն բաւական համառօտուած է, սակայն
չ'կարենալով այժմ յիշել թերի մնացած մա-
սերն , որպէս զի իրենց տեղերն ղետեղեմ , այս-
չափ զիտողութեամբ մը կը բաւականանամ :

Էջ 140 , սիւնակ Բ. իմ խօսքին վերջա-
բանին մէջ ըսուած է «ամենէն շահաւոր գու-
մարեան են այն ծախքերն և այլն» որ սխալ
է , և պիտի լինի «ամենէն շահաւոր ծախքերն
են այն գումարները և այլն » :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Էջ 129 , սիւնակ Բ ,
արձանագրեալ խօսքերս թերի են և անիմաստ .
անոնց տեղ պէտք է կրկնել 128 բլէթի նախ-
ընթաց խօսքերս ի պատասխանի Թորոսեան է-
ֆէնտիի հարցման 'ի մասին պաշտօնին փննիչ
Յանձնաժողովոյ :

Էջ 144 , երբ Չերաղ էֆէնտի ըսաւ
թէ « 20 տարիէ 'ի վեր կաշխատիմ » հար-
ցուցի թէ՛ « քանի տարեկան է՞ր » և պա-
տասխանեց « 13 տարեկան հասակէս սկսեալ
կաշխատիմ » : Նոյնպէս էջ 147 սիւնակ Բ. ի
պատասխանի Արշակ էֆէնտիի որ կը յայտա-
բարեր թէ « 400 տարիէն իսկ ունենայ տնթ
չ'է » ըսի « 1000 տարիէն : »

Կը խնդրեմ Գիւանէն արձանագրել սոյն
դիտողութիւններս :

ՁՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Բայց ոտոնք մաս-
նաւոր խօսքեր են և ոչ թէ օրինական դիտո-
ղութիւնք :

Ուրիշ դիտողութիւն չ'լինելով , Ատենա-
պետ էֆէնտի ժողովոյ ընդունելութեան կեն-
թարիէ Զ. նստի ատենագրութիւնը որ կը վա-
րէջ հանդերձ եղած մի բանի դիտողութեամբ :

Տեղեկագիր Նախաձեռնութեան Գիւանի
ի վերայ առաջարկութեան Ազգային վարչու-
թեան յաղագս Առաջնորդական խնդրոյ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեր ատենական գոր-
ծողութեանց կարգին մէջ միայն Նախաձեռնու-
թեան Գիւանի մէկ տեղեկագիրն ունիմք վե-
րաբերմամբ առաջնորդական խնդրոյն , բայց
ըստ որում նոյն խնդիրն մեր օրակարգին մէջն
է , ուստի օրինական է , ներկայացեալ սոյն
տեղեկագիրին ևս վերադաշէլ նոյն խնդրոյն նը-
կատուման պահանջ :

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — Կ'առաջարկեմ կար-
գաւ այդ տեղեկագիրն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս որ յայտնեցի,
այդ տեղեկագիրին ընթերցումն այժմ աւելորդ
է , և օրինական է վերադաշէլ զայն առաջնու-
ղական խնդրոյ մասին՝ վարչութեան կողմանէ
եկած առաջարկութեան վրայ լինելիք վիճարու-
նութեան :

ՋԱՆԱՋԱՆ ՆՍԱՐԱՆՆԵՐԷ — Այո՛ , օր-
նաւորն այդ է :

Հետեւարար ըստ առաջարկութեան Մայր
Գիւանի , ժողովն կ'ՈՐՈՇէ՛ Նախաձեռնութեան
Գիւանի տեղեկագիրն նկատողութեան առնուլ
Օրակարգի Գ. խնդրոյն վրայ լինելիք վիճարու-
նութեան պահանջ :

Խնդիր երուսադիմալ պարտոց բարձման
և Տեղեկագիր վարչութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ որոյման ժողո-
վոյդ , թէեւ մեր այսօրուան Օրակարգի երկ-

որոգ խնդիր նշանակուած է Ս. Երեստղիմայ սարտուց բարձման խնդիրն , սակայն Վարչութիւնը և Քննիչ Յանձնաժողովը ց'արդ իւրեանց աշխատութիւնքն աւարտած չ'իյնելով , բնականաբար չ'է կորելի մեզ այժմէն ձեռք առնուլ նոյն խնդիրն . ուստի յաջողոյ նստին սրահելով դայն , կ'անցնիմք մեր Օրակարգի Գ. խնդրոյն :

Գ.

Շարունակութիւն վիճաբանութեան 'ի վերայ Ազգային Կեդր. Ելմտացոյցի .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Ձերազ Մի. նաս էֆէնտիինն է' , աւտրուելու համար իւր նոխորդ նստէն սկսած առենարանութիւնը :

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. — (Բեմն ելնելով) Փա. փաղեան էֆէնտի առարկեց թէ արժանաւոր վարժապետք և վարդապետք ամեն բան ինքնին յորինելով կը թեթեւցեն Պատրիարքարանի բեռը : — Խօսելով լոկ այն անձանց վրայ , զորս անուանեց , կը հարցնեմ թէ Փորթագաւեան էֆէնտի Վանէն , Գարեգին վարդապետ Տիարպէրիբն և Վահան վարդապետ Եւզովիայէն ընչ ընա տուին Կեդրոնին : Այն թեմերն իսկ , զ'որս ոմանք լաւ Վարչութեան տխրարներ կը կործեն , զիմոծ են և կը զիւմեն Պատրիարքարանի , որպէս կը վրայեն Գիււանատան սրաշտոնադրերն : Ա' ընդունելով սիղզբունքն , այլ կ'առարկեմ թէ արժանաւոր ուշադրութիւն կը հրաւիրեն և հետեւապէս կը կորտոն Պատրիարքարանի նեցուկին . Խրիմեանի , Օրմանեանի պէս բարեկարգիչ առաջնորդք ընդդիմութեան կը ստատահին , որով ներքին բարեկարգութեան խնդիրն աւելի կը զժուարանայ , և զրգարտուած Փորթագաւեան մը ներսէս Պատրիարքի առ Հաստն բաշա յանձնադրելով կը մնայ կանգուն . արեմն նախ

Պատրիարքարանի , իրր եզլա դաստիարակութեան և զաւաւական այցելութեան և հովուութեան :

Առարկեց թէ Սահմանադրութենէ յառաջ Պատրիարքարանի մէջ կար աւելի զործ , բիչ զիր և Ձ գրագիր , և թէ բերանացի միջնորդութիւնը կը բուէ : — Փանի սր զիրը բիչ էր , զործը սրակաս էր և կը բաւէին Ձ գրագիրք : Զօպանեան էֆէնտի յայտարարեց թէ « առ այժմ անկարելի է » մարդ զեղչեւ ներկայ սրաշտոնութեանն . Եթէ այս մասին բացուի ձանձեան էֆէնտիի փափաբած բնութիւնն , ում չ'եմ հակառակիր բնաւ , աւելորդ նկատուելով արտաքուսիք սրաշտոնէից թողալը պիտի բարդուի բաղնաշատ սրաշտոնէից ամսականին վրայ , որով սչինչ խնայած պիտի լինինք : Երկր'ս գրագիր . այժմ ժողովոյս իսկ չ'են բաւեր , և ոչ իսկ Փափաղեան էֆէնտիի և իւր բարեկամաց հարցմանցն , որք հին և նոր խնդրոց վրայ ընդարձակ տեղեկագիրներ պատաստելու պոտձառ կը լինին , այնքան ընդարձակ որ Մայր-Աթոսայ անցից նկատումար հարցում ուղղող Թիւրքլեանեան էֆէնտի տուջինն եղաւ զգալու թէ ժողովս ժամանակ չը սխտի ունենար լսել Վարչութեանն այդ մասին եկած յօքնաթերթ սրատախանագիրն . ըսել չ'եմ ուզեր թէ պէտք չէ հարցում ուղղել . կան հարցումներ որք օգտակար են , թէ և կան ալ որ աւելորդ կամ սղգալնաս , ինչպէս 1879 նոյեմբեր 30 ին խորագիր երեստիլանի մը սա հարցումն . « Ուրից ներկայ վիճակին նկատմամբ կ'առաջարկեմ որ բարեհասօժ Ամեն Ս. Պատրիարքը լիուրի տեղեկութիւն տալ Ազգային ժողովոյն » , մինչ կրակի մէջ կը ծփար Զէյթուն : Սահմանադրութեան 13րդ յօդուածը Պատրիարքարանի գիւանատունը 3 գորտսնեկի կը բաժնէ եւ 13րդ յօդուածով կըսէ . « Գիւանատունը բաւական թուով գիւանադը . « պիրներ պիտի ունենայ : Ասոնք ալ հայերէն « լեզուն քաջ զխոնալու են , և ամէն մէկը իր « սրաշտոնին կատարեալ հմտութիւն ունենալ » լու է : Այն մէկ Գիւանադովոր ըստ իւր սրաշ

« տօնի պատասխանատու է այն ժողովոյն կամ « Խորհրդոյն » որուն կը վերաբերի: Առջնը մէ-
 « կէն պատասխանատու են Գիււնտպետին : »
 Աւրեմն շատ պաշտօնեայնէր հարկ են Սահմա-
 նադրական մեքենայն վարելու համար և Սահ-
 մանադրութիւնը մեր նախորդք շինեցին : Գա-
 լով բերտնայի միջնորդութեան խնդրոյն , չ'եմ
 ընդունիր զ'այն , զի գիրը կը մնայ և վատահե-
 լի է , մանաւանդ որ ստէպ նախարարք խի
 պահանջած են Պատրիարքներէն որ գրով հա-
 դորդեն իրենց խօսածներն :

Պահանջեց որ գրագիրք 3-4 աշխարհականէ
 դատ , դարացէ եւս 10-12 նորահաս վարդա-
 պետք լինին , որ քիչով շատանան և կրթութիւն-
 —Չ'եմ կարծեր թէ ատով մեծ խնայողութիւն
 մ'արտադրուի . Խորէն Սրբազանի յիշատակած
 քահանայն 900 զըշ . ամսական կտանար ասիկ
 յառաջ , զուամբ ում չեն հասնիր իւր աշխար-
 հական պաշտօնակցաց շատերուն ամսականներն .
 եթէ առարկուի թէ նա քահանայ է և ընտան-
 եաց հոյր , կրնամ պատասխանել թէ վար-
 դապետք ալ ունին ընտանիք , այսինքն մայր ,
 բոյր և այլն . եթէ վարդապետք քիչով կը շատա-
 նան , է՞ր չեն երթար Բաղէշ և ուրիշ աղքատ
 դաւառներ : Նորահասից վարդապետութեանը
 զէմ եմ . լու է որ անոնք 30ը լրացնեն սար-
 կաւագ և 33ը լրացնեն վարդապետ լինելու
 համար , ըստ կանոնաց մեր խմատուն հայրա-
 պետաց : Գալով կրթութեւ կէտին , այս մասին
 փորձ մ'եղած է : զի Պատրիարքարանի Փոխա-
 նորդարանն և Արօժական ժողովոյ Գիււնը ե-
 կեղեցական պաշտօնեայնէր կը պորտնակեն
 միշտ , և կրնայ առարկուիլ թէ այդ կրթութե-
 վը վարդապետք եթէ անըդունակ են , չը
 պիտի կարենան զարգանալ որպէս չը կրցաւ
 հոգէլոյս Զաքարիա վարդապետն , և եթէ ըն-
 դունակ են , մեղք է իթ այնքել զանոնք մեքե-
 նական աշխատանքի մէջ և լու է որ ուղղակի
 վանքերն և Գաւառներն երթան : Մեր ընդ-
 դիմաբանք մէկ կողմէն Պատրիարքարանի և
 Արօժական ժողովոյ մէջ կ'առաջարկեն խոնել

Վարդապետ և Նախակարն , և միւս կողմէն
 կարողակեն թէ Գաւառացիք կըրահանայ
 անհրաժեշտ պէտք ունին : Թող վարդապետք ,
 իրենց ընտանիքն առնել նստելու տեղ , վտն-
 քերն և իրր առժամայ քորողիչ գաւառներն
 երթան քարոզել հրամանաւ Արքեպիսկոպարն ,
 որպէս եկեղեցական օրէնք կը պահանջեն , է՞ր
 կը ղեղերին աստ և 'ի քաղաքս :

Յայտարարեց թէ Գորեղին և Վահան
 վարդապետք մեծապէս օգտուկար եղան ազգին
 իրր գաւառական այցելու : — Այո՛ , այլ ա-
 ուանց Պատրիարքարանի չը պիտի կարենային
 ծառայել , զի Տէրապէ՛րիի և Երբրոմի շոյ
 տեղացոյց կողմէն խի խոչընդոտ դտան , և
 այսուհետեւ գաւառական այցելուք արտադին
 խոչընդոտներու ալ պիտի կարենան պատա-
 հիլ , եթէ Պատրիարքարանը , զորուոր և յար-
 գուած և հետեւապէս ազգեցիկ , չը միջնորդէ :
 Պիտի յարեմ թէ , եթէ ազգը օգտած է Վա-
 հան վարդապետի այցելութենէն , Փարսզեան
 էֆէնտի չէ կրցած օգտիլ անիկէ , զի հորոտա-
 հարութեան բուն պատճառի մասին իւր յոյս-
 նած կարծիքը յիշուլ Վարդապետի տեղեկա-
 գրին եղրակոյցութեան հակառնեայն է :

Առարկեց թէ վարդապետք և վարժա-
 պետք , յոյժ աղքատ լինելով , կը զըջան իրենց
 յանձն առած պաշտօնին վրայ և առիթ կ'որո-
 նեն խոյս տողու իրենց պաշտօնէն , Երկրին
 երկտական կոյցութիւնն է պատճառ ընդհանուր
 աղքատութեան ազդայնոց : Յուալի է որ ներ-
 կայ վարդապետք չ'բողբեցին իրենց վերա-
 դրուած զըջման գտղախորին զէմ . խնդիրն
 սպրուտտի վրայ չէ , զի յետին վարդապետք
 լուտոյնց պատառը կը ստանայ հայ սեղան-
 ներէ , այլ հարտացման վրայ , եթէ ոսկի
 զիջելու համար վարդապետ եղողներ կան ,
 լու է որ նորէն աշխարհական լինին , որո-
 խանակ կողպտելու իրենց ժողովուրդն , որոյ
 մեծամասնութեան ինթական վիճակէն լուա-
 գոյն է իրենցն ընդհանրապէս Գալով վարժա-
 պետաց , կրթական սասկտը զին մէջ ունեցած

քանամեայ փորձառութեամբս կը վերցնեմ թէ անոնք անդորր վիճակ պիտի ունենային եթէ Հոգարարձուք չը հետեւէին այն հակատեսե- ցական գրութեան զոր մեր ընդդիմաբանք կու- ղեն Պատրիարքարանի մէջ ալ ներմուծել. չար- եաց աղբիւրն է հոգարարձուցայ իրենց հա- սոյթէն աւելի ծախսեւն, այնպէս որ ուրիւն- ներու աճումը զրամական նուազում յտաջ կը բերէ, որպէս պիտի պատահի կեդրոնական պաշտօնէից ալ եթէ մեր սահմանափակ ելմը տայոյցին վրայ բարձենք զաատիրարութիւն և զաւառական հովուութիւն և այցելութիւն : Կոչմամբ վարժապետ եղօղները կը շատանան իրենց համեատ վիճակով, շահողխտութեամբ վարժապետ եղօղ վարձկաններն են որ ճոխա- գոյն պաշտօններու կը հետամտին, այս ձկառուս յատուկ է ասեմ շահաղէտի, զի զոր օրինակ ժամադրած մը, որ ամիսը 10 ոսկի կը շահի, եթէ ծխախտոի մենավաճառութեան մէջ 20 ոսկի ամսականով գործ գտնէ, կը վազէ կ'եր- թայ : Պէտք է անխղճակալ լինի և խոտտ- վանիլ թէ, եթէ ազբատ և հարստահարեալ վարժապետներ կան, կալուածատէր և հարջա- տահարիչ վարժապետներ ալ չ'են սրկախի : Կոյ վարժապետ որ, առանց մեծ զոհողութիւն մ'ընելու, կ'ուզէ ստանալ գերելջամետութիւն մը զոր ամիսոյք հազիւ կըստանային միլիոններ նուիրելով ազգին, և որ իրեն խաղալիք կ'ընէ Պարզութիւն, Պատրիարք և Կաթողիկոս :

Մեր ընդդիմախօսը պահանջեց որ պաշ- տօնէից հանգստեան թուակ սահմանուի, որ- պէս զէ չըլան ազգին համար ախտառօք, և ազգը վաճառականի քով կամ ուրիշ գործի գնէ արձակեալներուն մէջ 15-20 տարի շա- րունակ ծառայողներն : — Փափայեան էֆէն- տի աւերորդ ալխատութիւն մը յանձն առաւ հանգստեան թողակի հարկին վրայ խօսելով, զի նոյն բանն ըսած էի իրմէ առաջ և ոչ որ ընդդիմախօսած էր : Պատրիարքարանն ամե- նէն յառաջ զգացած է այս հարկն և հանգըս- տեան թողակ սահմանած է Փափաղեան թով :

մաւ էֆէնտիլին : Եւ այդ չը լացունողն'րն են որ 150 դր. ամսականով տարօրնեւրուն գէմ 20 0/0 զեղջ և արտաբտում կ'առաջարկեն, արտաբտում 20 տարի ծառայողաց խակ, որոց ըարիբ մ'ընել կը կարծեն վաճառականի քով գնելով զանոնք, որպէս զի նորին այլ-բէնի սկիւրն խեղճերն և տնրուական թողակի մը գա- տապարտուն իրենց ճերմութեան առեն :

Աւարտեց թէ Պատրիարքարանը պարտա- տար է կորեւոր գումար մը յատկացնել դաս- տիրարակութեան և զաւառական հովուութեանց, զի նախ զիրք և սոլա հաց : — Այդ գումարը մեզ կը պակսի այժմ. Պատրիարքը 20 ամսա- կանի օրահանջ ունի, և Պատրիարքարանն, ըստ վերջին հաշուեցոյցին, 383,000 դր. պարտա- կան է. այս բացատկան կայութեանէն չ'էնքը զրական օգուտ, և զաատիրարակութեան և զաւառական հովուութեան և այցելութեան դատին վնասել է անկարելոյն կապել զայն, ու ըրով կարելին կը վրիպի ուշադրութեանէ : Խորէն Սրբազան գէթ 500 ոսկի ալ կրօնական ծառա- վոյ համար պահանջեց, երեղեցական և աղխա- հական զբազրոյ միջեւ խարութեան խնդիր նկատելով ինչ որ աղբատութեան խնդիր է պարզապէս, զի Ուսումնական և ուրիշ Խոր- չըրոյց աշխարհական դրապիր կրօնական Ժո- դովոյ Դիւանադպիրներէն նուազ թուակ կըստա- նան : Ուրեմն 4,000 ոսկի է որ յանուն դպրոցի և եկեղեցոյ կը պահանջուի մեր անձուկ ելմը տայոյցին : Գործնական մարդ լինիր . 1 քաշ ալիւրէն 3 քաշ հաց չ'էնքեր . . . :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՅ. — (Ընդմիջելով) Մէկ քաշ ալիւրէն երեք հաց չ'էնքեր, բայց երեք կոտր կրնայ ըլլալ :

ՁԵՐԱՋ Մ. ԷՅ. — (Շարունակելով) Մէկ քաշ ալիւրէն երեք քաշ հաց չ'էնքեր ըսի, և աղքատը չ'է կարող փուռ շինել աժտն հոյ ունենալու համար : « Գատիրարակութեան հա- մար ծախքն շահու գրուած դրամադրուի մ'է »

կ'ըսէ Փառիաղեան էֆէնտի, այլ երբ գրամա-
 գլուխ չը կայ, ի՞նչ սխալ դեմեր շահու: Ինչ
 համեմատութեամբ որ ազգը կուտայ կեդրոնին,
 նոյն համեմատութեամբ կեդրոնը կուտայ ազ-
 գին: Պատրիարքարանն ողբմութիւն կուտայ
 կարօտելոց և բանտարկելոց, այլ Գուրգէն է-
 ֆէնտի կը սխալի կարծելով թէ Հիւանդանոցն
 ցին տրուած նպատակն ալ միևնոյն կարգէն է:
 նշանուածութեան հասցիքի կէսն և անցազրի հա-
 սայթն, առ նուազն 35,000 զըշ. ըստ նոր Եւ-
 մըտացոյցին, որք անցած տարի 47,169¹/₂ զըշ.
 արտադրած են, Յակօր Պատրիարքն ՚ի վեր կը
 տրուին ՚ի նպատակ Հիւանդանոցի Որբանոցին,
 այսինքն դատարարակութեան. ուրեմն Պատրի-
 արքարանը իւր հասցիքից մի կարևոր մասը
 կրթական պիտուից կը յատկացնէ արգէն, ա-
 ռանց սպասելու մեր ճատերուն, և աւելին սի-
 տի յատկացնէ եթէ միջոցները ներեն: « Գաս-
 տիարակութիւն, դատարարակութիւն» արտա-
 լը օգուտ չ'ունի. խնդիրը միջոց գտնելուն մէջ
 է, և շնորհակալ եմ ձանձրեան էֆէնտիքին
 որ հասցիքի նոր աշխիւրներ գտնելու հետա-
 մուտ եղաւ, և ոչ ժողովրդականութիւն շահե-
 ցնօղ ճառեր արտասանելու: Մինչև որ հա-
 սայթն աճի, Ռուսմանկան Խորհուրդը կրնայ օգ-
 տակար ծառայութիւններ մատուցանել ուսանց
 կեդրոնական վարժարանի բացմանն իսկ, և անձ-
 նուէր Գրիտատատր էֆէնտի տարիներէ ՚ի վեր
 ուսում կը ծաւալէ առանց ու է նպատակ ստա-
 նալու: Կրօնական ժողովն ալ կրնայ օգտակար
 գործեր կատարել ուսանց 500 ոսկուց, և ոչ
 որ կը մեղադրէ զ'այն եթէ է կարենայ բաշա-
 նայ յղել Եսնեա: Գուրգէ կարօտ գաւառաց,
 անոնք առ այժմ առաջնորդի տեղ կրնան բա-
 հանայ մ'տարբեցնել և վարժապետ և վարժու-
 ճի կը տուան կրթական Ընկերութիւններէն և
 Գարցիսաէր-Տիկնանց վարժուհիներէն, ասոնք
 ալ Հայ մտքիներն են և օժանդակ Պատրիար-
 քարանի, որ ըստ վարժութիւն մը հաստատելով
 իսկ կրնայ մեծապէս օգտակար լինիլ ազգին: Նախ
 հաց եւ ապա զիբր բացատրութեամբ մէջ
 « բաշարական նշանակութեան » կէտ չ'կար,

ինչպէս Փառիաղեան էֆէնտի կը կարծէ, այլ
 անտեսական: Պէտք չ'է խեղաթիւրել խօսքե-
 ըքս. ևս Պատրիարքարանի գրազրաց հացին
 առաջնութիւն չը տուի, այլ, ինչպէս ասե-
 նազարութեանը կը վկայէ, յայտարարեցի թէ,
 ցորենին տէգը հրկիզում զաւառացոյն համար,
 իւր հացին խնդիրն աւելի ծանր կը կռնէ բան
 կրթական յայտազրի բարեփոխման խնդիրն:
 Ուրեմն, ազգային անմիջական շահուց տեսա-
 կէտով, Պատրիարքարանն ոչ թէ չորրորդա-
 կան, ինչպէս կը կարծեն մեր ընդդիմաբանք,
 այլ առաջին կարևորութիւն ունի, մինչ Գաս-
 տիարակութեան համար ամբողջ 19 ոսկի նպատակ
 տալու խնդիրն երկրորդական է, զի խնդրը
 Պատրիարքարանի և դատարարակութեան միջև
 չ'է: Բանի որ ազգը միլիոններ կուտայ իւր զըպ-
 րոցաց, այլ Պատրիարքարանին և ամսական
 19 ոսկուց նպատակն միջև է:

Վերջապէս առարկեց թէ Պատրիարքն ա-
 մեն օր մէկ մէկ դպրաց այցելելով, պաշտօն-
 եայք վարժապետութիւն ընելով և Պատրի-
 արքարանին գրուած թուղթերը աղբատ աշա-
 կերտաց բախտելով, առաւել արդէնուսուր
 սխալ լինին: — Ուրեմն մեր ատենադրութեանց
 թուղթն ալ տանք աշակերտաց, և մեր ատե-
 նարանք ամեն օր մէկ մէկ դպրոց այցեն և
 դաս տան (իբր թէ ամեն ոք կարող լինէր դա-
 սախօսել), որով վարժապետք անօթի մեռնին:
 Սահմանադրութիւնը չ'արտօնէր որ Պատրիար-
 քարանի պաշտօնեայք վարժապետութիւն ընեն:
 Ներքէս Պատրիարք և՛րբ չ'է այցած ոչ միայն
 Հայ, այլ և հայախիթ զպրօցներ, այլ ի՞նչ
 օգուտ կրնայ քաշուիլ Պատրիարքի մ'այցէն,
 որ միայն վաղանցիկ փայլ մը սփռելու կը ծա-
 օտայ: Համարակալութեան Գիւանը չորրորդա-
 կան կը նկատէ և Փառիաղեան էֆէնտի յօգուտ
 զպրօցոց գրեթէ գոցել կ'առաջարկէ Պատրի-
 արքարանն, որ սակայն դեռ երկի բարենորոգ-
 մանց և առանձնաշնորհմանց խնդիրներուն առ-
 թիւ ժողովոց հաւանութեամբ անմտաց ծա-
 օայութիւններ մատուց, որ միշտ պատկառ
 կ'ազգէ ոչ միայն գաւառական Հայոց, այլ և

Քրդաց և Թրքաց , որք մերթ իրեն կը դիմեն ,
 և որոյ անունը ստեպ կը հասցնէ Հարսուս-
 Հարչաց ձեռքը : Անոր է որ կը դիմուի երբ
 միջամտութիւն տեղի ունենայ մեր դպրոցաց
 մէջ . Մասիսի այն թիւ , ուր համառօտուած
 էր Փափաղեան էֆէնտի ձառն ուսմ իր պա-
 տասխանեմ , կը սարունակէր նամակ մը Կէ-
 լիօլուէն , ոյր հայ դասատուն կըսէ Պետական
 քննչին . « Անցեալ օր 4 հատ Աւետարան և 2
 « հատ Մէարիֆի հրամանաւ տպեալ պարզ
 « գրեանք մինչև որ յաշտեցայ մարատունէն
 « անցնել , հոգիս բերանս եկա » : Յունիս Ար
 Արեւելքին մէջ պատմուած է Տիւրքիի Սրամ-
 եան վարժարանի հրկիզումն երկու թասքերէ ,
 և միոյն հետեւեալ օրը միւսին ըսած խօսքերն
 . . . : Միթէ Խրիմեանէն աւելի աղբու այցե-
 լու՞ արտի յղեմը վասպուրական . Կիլիկիոյ
 մէջ , ուր օտար կրօններ կը մրցին մեզ դէմ ,
 կրնանք յղել այցելու : առանց պաշտպանու-
 թեան Պատրիարքարանի : Գոնի որ կը միտիք
 ջնջել զայն , է՞ր կը գանդաւորը Պալատէնիա-
 յէն , որ նոյն բանը կընէ գաւառաց հետ յու-
 րաբերութիւն հաստատելով : Օտարն ալ կուզէ
 դայք , և երբ Փափաղեան էֆէնտի կ'ըսէ .
 « Բազում թիւ թղթակցութեան և բազրիրնե-
 « բու գիտնելն աւելորդ է . ի՞նչ օգուտ երբ այդ
 « գրերն անզօր պիտի մնան կամ պարսպ »
 Թագրիբը չը գրելու մասին Խայիլ Շէրիֆ բա-
 շայի հրամանը յաղոցուցած կը լինի անուղ-
 զակն : Կը տեսնէք թէ ով է խարուօնն
 և թէ նորեկ Երեսօրհանք իրաւունք ունին չը
 հետեւիլ հինբրէն ոմանց : Մեր ընդդիմաբանք
 լուսաւորեալ-խաւարեալի խնդիր մը կը հունեն
 ենթադրելով թէ դաստիարակութիւնը թ՛նա-
 միներ ունի , իբր թէ Ներսէս Պատրիարքը ,
 որ Ռուսաստանէն իրեն իբր ժամուց յղուած
 400 ոսկին Միացեալ-Ընկերութեանց նուիրեց
 և միշտ սրաշտպանած է կրթութեան անկա-
 խօթիւնն և ծաւալումն , կամ վարչութեան
 անդամք , որք իրենց զաւակաց կրթութեան
 համար դանձեր կը զոհեն , և կամ երեսօ-

խանքս , որ դրբեր հրատարակած ենք ազգային
 դաստիարակութեան վրայ և 8 ատրի յառաջ
 հրաւեր կարդացած ենք ժողովուրդին վարժա-
 պետանոց մը հիմնելու , դեռ ուսման յարգն
 զգուցած չը լինէինք : Փափաղեան էֆ. դաւադա-
 կան դաստիարակութեան օգուտները կը թուէ
 մեզ , որ իբր երեսօրհան ընտրուելէն առաջ ,
 այն է ԱՅ ամերէ ի վեր , Արշակունի և Արված-
 եան էֆէնտիներու և ուրիշ ազգասէր երիտա-
 սորքներու գործակցութեամբ , հիմնած ենք և կը
 տածենք այն ընկերութիւններն որք 50 դըս-
 րացներով ծածկեցին Հայաստան և Կիլիկիա ,
 մինչ ինք գաւառական վարժարանաց օգուտ ,
 կարութեան վրայ պլատոնական ձառք խօս-
 սելով շատացաւ . . . :

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — (Ընդմիջելով) Արդար
 չ'ես Ձերազ էֆէնտի , անիրաւ ես :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կ'ազգարարեմ առե-
 նարան և թէ ընդմիջող էֆէնտիներուն ոյ
 զգուշանան անձնական ակնարկութիւններէ :

ՓՒՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Թո՛ղ խօսի , թո՛ղ
 խօսի , լաւ կը փաստաբանէ , նոյն խի մարդա-
 պանաց փաստաբան մը կը շնորհուի :

ՉԵՐԱՋ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Սահ-
 մանադրական Պատրիարքէ մը գործ պահան-
 ջողներ , դուք ինչ գործեցիք Ա՛ս ամերէ ՚ի
 վեր որ երեսօրհան էք , եթէ ոչ աղբ ժամա-
 վաճառ ընել ձեր , խի բերած վարչութիւնները
 և Պատրիարքները տապալելով . խոտարած
 Պօղոս Թաքթեանը տատարելէ յետոյ , դուք ,
 գաւառասէրքդ , ջանայիք բարոյապէս սպուն-
 նել Խրիմեան Հայրիկը որոյ ճակտին վրայ կար-
 ծես դաւառացոց վիշտը բանդաւորած է , և
 այժմ՝ Ներսէս վարժապետեանն է որ կը հա-
 լածուի անխնայ . եթէ միտիմարութիւն մ'ու-
 նինք , սա է թէ ժամանակակից չ'էք եղած
 Գրիգոր Լուսաւորչին , սպա թէ ոչ անոր հա-

մար ալ երեղեցեայ մէջ « ը՛ր պիտի յիշուի՞ »
պիտի պտուպիբ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Բնդմիջելով զ'Ատե-
նաբանն) Չերազ էֆէնտի, դար ուղղակի անձ,
նահանութեանց դէմ կը խօսիք որ բնաւ չ'եմ
կրնար ներել, ոտաի կամ հարկ է Ձեզ դաւ-
նալ 'ի խնդիր և կամ թողուլ զրեմն . . .

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Օրէնքը չ'ներէր
արգելել երեսփոխան մը խօսիլէ. պէտք է որ
ամենքն ալ խօսին :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Առ Ղազարոսեան ԷՖ.)
Օրէնքը չ'ներէր նաև, Ղազարոսեան էֆէնտի,
որ երբ Ատենապետն կը խօսի, երեսփոխանք
ընդմիջեն զինքն : (առ Ատենաբանն) Ուրեմն
Չերազ էֆէնտի, ինչպէս յայտարարեցի, պէտք
չ'է մանրամասնութեանց մէջ մտնել և խօ-
սիլ միայն Եւրոպայիցի վրայ :

ՉԵՐԱԶ Մ. ԷՖ. — Բայց ամեն խորհրդարա-
նի մէջ ներելի է, Եւրոպայցի տոթիւ ներ-
քին սկզբման խնդրոցիցայ վիճարանի :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Պատասխանելով)
Կըմբանեմ թէ Եւրոպայցի առթիւ ներքին
սկզբան խնդիրներ երեսուն կեննեն, բայց երբ
սահմանն կանցին, յայնժամ ընդդիմութեանք ևս
Ձեզ պիտի սրտասխանեն և այս կերպով ոչ
թէ Ժողովս զինդիրն պիտի լուծէ, այլ խըն-
դիրն զմոզովն :

ԱԶՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ես բնաւ չ'իմ փա-
վաքէք որ Չերազ էֆէնտի իւր ստեղծարանու-
թեան մէջ Աղչ. Բնիկութեանց վրայ խօսած
ժամանակ իմ անունն ալ յիշատակէր, վասն
զի միայն մենք չ'ինք աշխատողք, այլ հար-
խարաւոր երկրատարրք ևս անպիտեան մեզ և
մեզ հետ աշխատեցան :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Փախաղեան էֆէնտի
Աղլին համար ամենէն աւելի աշխատող վար-
ժապետն է. պէտք է արդար լինիլ :

ՉԵՐԱԶ Մ. ԷՖ. — Քանի որ Գիւանին կող-
մէ կ'աղբարարուի ինձ այսպիսի մանրամասնու-
թեանց մէջ չ'մտնել, կը զեղջեմ այս մասին
ըսելիքներուս մէկ մասն, և կըսեմ. պէտք է
համոզուինք թէ այս ինչ կամ այն ինչ խնդիրը
արտօրակա ընենելով Պատրիարքութիւնը հար-
ուածելը ազգը հպուածեւլ է, և ոսոխներէ
չըՎաղասեալ ժողովուրդի մը մէջ խօսովութիւն
հանելը անոնց գործիք լինիլ է :

Աջակցիմք Պատրիարքութեան, վոխմանակ
փուշեր ցանելու անոր առջև. Նա տածանելի
է ինքնին, զի եթէ դժար է մեզ կառավա-
րել ընտանիք մը և մինչեւ իսկ մեր անձը, որ-
քան զժար է Պատրիարքութիւնը պաշտօնն,
որ կըսուած է կառավարել 600,000 ընտանիք
և 3,000,000 անձ : Վարչութիւն մը տապալելը
մեծագործութիւն չ'է, և 100 տարիէն աւար-
տած չ'ենք մը կրնայ մէկ վայրկեանէն օգը հան-
ուիլ ար մ'ուժանակով. անշուտ ներելի է
արդար քննադատութիւններ ուղղել մեր Վար-
չութեանց դէմ, այլ պէտք է որ անոնք շինիչ
լինին և ոչ բանդիչ. Պատրիարքութիւնը հայրա-
կան իշխանութիւն մ'է, և մեր վարմունքը պէտք
է որ որդիական բարձժտութեան գրօջը կրէ .
մէկ ընտանիքի անդամաց միջև ևս կրնայ վէճ
ծաղիլ և այլ այս վէճը պէտք չ'է որ միջ դանոնք
մինչեւ կրնա ստաւ այն տան որ զիրենք կը պա-
շտարարէ : Ժամ է որ հրաժարիք բանդիչ բա-
ղարականութեանէն, և ձեռք ձեռքի տանք շինիչ
բողոքականութիւն ընելու համար այսուհետև :

Եղբրակացութիւն : — Կ'ընդունիմ Եւրոպ-
այցին : Գալով դատարարակութեան բարոյական
մասին, իբր անմիջական դարման կը յարուցա-
նեմ 1882 Ապրտեմբեր 23ի սա առաջարկս :

« Նկատելով որ Ազգային ժողովն չ'է կրցած
« քննել և վաւերացնել Թաղային ծրագիրն 1881
« Յունիսար 22էն ի վեր և Կրթական ծրագիրն
« 1884 Ապրիլ 2 Էն ի վեր »

« Նկատելով որ, այս դանդաղութեան շը-
 « նորհիւ, մեր ներքին վիճակի բարւոյրումն կը
 « սխտի լինիլ երազական, զի ահա գրեթէ բոլոր
 « թաղերն քոտսի մէջ են և աղքատիքն դաստիա-
 « ք բակութիւնն չունի ուղեցոյց » .

« Կառավարիեմ որ Ազգային ժողովն գու-
 « մարի ամեն ուրբաթ և տախտակայէս ձեռ-
 « նարկէ բնեւ և վաւերացնել Թաւաղային և Կըր-
 « թական ծրագիրներն » :

Նյութականին համար կ'առաջարկեմ որա-
 կարգն անցնել « Ազգային տրոյ խնդիրն » ,
 որմէ կ'ախում ունի կրթական և հովուական
 պէտքերու, մէկ խօսքով ազգային բոլոր ընդ-
 հանուր խնդիրներու գոհացումն, ինչպէս 1864
 Յուլիս 26 ի նստին մէջ յայտարարած է Ռու-
 սիոնեան, որ իւր «Ազգային հանդանոսութիւն»
 անուն գրքին 16րդ էջին մէջ կըսէ . « Հապա
 « ընդհանուր դաստիարակութեան խնդիրը ո՞վ
 « պիտի բերէ Ընդհանուր ժողովին առջեւ, ու
 « րո՞ւ պիտի պարտինք այս բարեբարութիւնը :
 « — Իւր արքէ՛ հանդանոսութեան խնդիրն է որ
 « իրրև յառաջընթաց այս բոլոր խնդիրները պի-
 « տի իր ետեւէն քաշէ բերէ Ընդհանուր ժող-
 « վին առջեւ, հանդանոսութեան պիտի պար-
 « տինք այս բարեբարութիւնը : Այս խնդիրը
 « որչափ արդիլ երեւայ Սոհմանադրութեան
 « մէջ, երեւցածին պէս չէ, պէտք է աղէկ զըն-
 « նէլ դանի . աղքատիքն հաստատութեանց վե-
 « րաբերեալ գրեթէ բոլոր խնդիրները զօրու-
 « թեամբ կը պարունակէ : Սահմանադրական
 « գաբթթիւն մէջ հանդանոսութիւնը համատե-
 « դութիւն մընէ, աղքատիքն միւս ընդհանուր
 « խնդիրները անկէ տուկարեալ էն . ո՞վ որ ա-
 « ոսնց թարուն խորհուրդի կը զիտէ, ո՞վ որ
 « բարեմտութեան հասարակ ակնոցով կը զննէ
 « և ո՞չ չարամտութեան մանրադիտակով, անի
 « սրցծառ կը տեսնէ՛ դանոնք անոր մէջ : Հոն-
 « գանակութեան խնդիրը շարժի նէ միւսնէրն
 « ալ կը շարժին, անի լացուի նէ միւսնէրն ալ
 « կը լացուին : » Եւ իբր անմիջական դարման,
 կ'առաջարկեմ հետեւեալն :

« Նկատելով որ Ազգային ժողովն անհրա-

« ժեշտ դատած է դաստիարակութեան և գա-
 « աւազական այցելութեան և հովուութեան յատ-
 « կացնել տարեկան 50,000 զըն-ի կեդրոնական
 նպաստ .

« Նկատելով որ Պատրիարքարանի Ելմա-
 « ցոյցն անկարող եղած է և տույթմ անկարող է
 « ամուղջապէս վճարել յիշեալ դումարն .

« Կ'առաջարկեմ որ, մինչեւ որ Պատրի-
 « արքարանի հասցեյն ամի, Ազգային երեսիւ-
 « խաններն իրենց մէջ հաւասարուպէս հանդա-
 « նակեն և աղքին նուիրեն յիշեալ դումարն : »

ԱՂԱՏԵԳԵԱՆՑ Մ. ԷՅՑ. — (Բեմն Ելնելով)

Թէեւ կուզիլ ամենէ վերջ խօսիլ, բայց որով-
 հետեւ կարգն իմ եկաւ, ուստի ստիպուած
 եմ խօսիլ :

Ես ոչ մէկ երեսխոխանի ճառադրութեան
 դէմ առարկութիւն չ'ունիմ անեւ, ուչադրու-
 թեամբ մտիկ արեցի ամենքն ալ տեսնելու հա-
 մար թէ՛ ո՞ր պիտի գտնէ ոսկւոյն ակը. մի-
 այն ձանձրեան է ֆէնտի մէկ միջոց ցոյց տուեց
 արդիւնք բերելու համար, բայց այդ միջոցն
 էլ նորէն տուրբի կերպարանքով է : Ես այն հա-
 ւատքը ունեցել եմ թէ Ազգն իրաւունք չ'ունի
 եւ չէ կարող ունենալ տուրք հաւաքելու, վասն
 զի տուրքի ժամանակն անցել է ինձի համար,
 ուստի աւելորդ կը համարիմ խօսել որա մա-
 սին : Ահա ամենամեծ ապացոյց երոշադէ մի
 խնդիրը, որ ցոյց տուեց թէ՛ անկարող եմք
 տուրք հաւաքել նոյն իսկ Քրիտոստի Ս. Գերեզ-
 մանին համար, ո՞ր կը մնայ դաստիարակու-
 թեան եւ ուրիշ նպատակների . ուստի որա
 վրայ ինչ ճառեր ալ որ խօսինք, անօրուտ են :
 Բայց ի՞նչ ասել կուզեմ, միթէ ե՞ս պիտի դըս-
 նեմ միջոցն, ինչ որ չ'կարողացան անել Պատ-
 ւաչոսեանկիցներս : — Ինձ կը թուի թէ այն
 Միջոցն է՝ ուշաւատանք, գիտակցութիւն իրին,
 եւ դործնէութիւն :

Շատ անգամ մտածել եմ թէ մէկ ազգի Վար-
 չութիւն ի՞նչպէս կրնայ հարստանալ կամ թէ
 ասանց հարստութեան կրնայ յաջողել : Ասանց
 դրամի՛ մի Վարչութիւն ոչ հարստանալ եւ ոչ

յաջողել կարող է : Ազգերու հարստութեան և հետեւապէս զարգացման զլլաւոր պայմաններն են՝ նախ արդարութիւն , երկրորդ՝ զործնէութիւն եւ երրորդ , զբամ . մի վարչութիւն որ զուրկ է այս երեք պայմաններից, աւաղի վրայ հիմնուած է . ուրեմն ամենէ առաջ պէտք է ջանամք Վարչութիւնը զբամատէր աւելւբայց ի՞նչպէս : Ասոր վրայ մտածել , խորհել իւր գտել եմ միակ միջոց , այն է՝ վերադառնալ զէս պանցեալ ժամանակները, տեսնելու համար թէ ասկէ 70-80 տարիներ առաջ Ազգն ինչ կ'անէր :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Շատ իրաւացի է :

ԱՂԱՖԵԳԵԱՆՑ Մ. ԷՅ. — (Շարունակելով) Ես մեր Հայաստան աշխարհն ժուռ եկել , քննել և "ուսումնասիրել եմ , ոչ թէ շահադիտական նպատակով , այլ միայն քննելու համար , եւ տեսել եմ որ այս Ազգին մէջ կիսականչ հարստութիւն կայ . իրաւ է որ կիսականչդան է այն , բայց երբ հոգ տարուի , կարելի կը լինի վերականգնացնել այդ հարստութիւն եւ արդիւնաբեր անել : Զը մտնում ասել որ մենք Հայերս Եկեղեցական ժողովուրդ մ'եմք եւ միայն մեր Եկեղեցոյ գլուխն , այսինքն Կաթողիկոսը կարող է տուրք հաւաքել Հաւատացեալներից նուիրակութեան միջոցաւ եւ ուրիշ ոչ ոք :

Կ'ասէի թէ՛ կիսականչդան հարստութիւն կայ , բացատրեմ : — Հայոց ազգ Ռուսայ , Տաճկայ եւ Պարսկայ Հայաստանի մասերից մէջ շուրջ 260 վանքերի տէր է , ամենաբնութիւն և բերրի հողերի վրայ , ժամանակին հաստատուած ու հիմնուած մեր նախնիքներից , ինչպէս որ նշանակուած է աշխարհազրութեան մէջ : Բայց այդ վանքերն կէտից աւելի երեսից ձգուել եւ անխնամ մնացել են եւ որոց տեսնիլով մի ատեն 50 զրչ. եթէ կ'արժէր , այսօր 500 զրչ. կարժէ , եւ մի քիչ ժամանակից

5000 զրչ. արժողութիւն գուցէ ունենայ , ինչպէս են Մշոյ , Խարբերդի , Երզրուսի , Պաշքաւէի , Զարասնճագի , Արդնայ վանքերն . թողլով Փոքր Ասիոյ մէջ գտնուած բազմաթիւ վանքեր : Ինչո՞ւ համար Հայք իրենց նախնիքներից մնացած այս սեպականութիւնների տէր չ'կանգնին եւ թողնեն որ Քրդեր գրաւեն զանոնք : Միթէ Ընդհանուր ժողովիս պարտքը չ'է՞ տէր կանգնիլ նրանց եւ յօգուտ ազգին շահագործել տալ . եթէ մեր եւ Պատրիարքարանի պարտքը չէ , հապա որո՞ւն պարտքն է մենք այս ծածկուած հարստութիւնն երեսի վրայ թողել եւ տուրքի ետեւէ ինկել եմք եւ 10-20 զրչ.ի համար կը զիջանիմք ձեռք երկընցնել ուրիշներուն :

Ուստի ես , ինձ պարտք կը սեպեմ իրրեւ երեսիտիսան , մէկ առաջարկութիւն ներկայացընել Ձեզի . զիտեմ թէ՛ սր աստիճան կարեւորութիւն պիտի տրուի այս ըսածներսիս , ինչպէս որ եղաւ Երուսաղէմի խնդրոյն մէջ , բայց որովհետեւ խիղճ ունիմ , կուզեմ զոնէ մէկ մեզամ յիշեցնել Ձեզի . կ'ուզէք մտիկ արէք , կ'ուզէք մ'անէք :

Առաջարկութիւնս է պահանջել Ազգային Վարչութենից որ ձեռնհաս անձինքներից մի Մասնաժողով կազմէ , Վանորէից Խորհուրդէն զուրս եւ այս Մասնաժողով պաշտօն ունենայ քննել թէ՛ որքա՞ն վանքեր կան , ի՞նչ կաւուածներ ունին . անոնց հիօճէքները , սեհետները եւ քսութիւնները ձեռք անցնեն , ամենից մի կանց արժէք սահմանեն , եւ դանոնք շահագործելու , ուղղութիւն տան : Եթէ սպասենք որ վանքերն ընեն այս բան , այդ չ'իւնէր , որովհետեւ մեր վանական Միաբանութիւններն Եւրոպայի պէս կազմակերպութիւն չունին . մենք հաղիւ մի քանի դպրաւանքեր ունեցել եմք , և անկից զուրս ոչինչ :

Մեր վանքերի եկամուտները ՚ի հնու մն եկեղեցականների դատարարակութեան յատկացուել էին , բայց այժմ այնպէս չէ . ոչ եւ կեղեցականն կարող է անկից օգուտ քաղել

եւ ոչ Ազգը : Ուստի այս տեսակ կարող մի Մասնատողովի պէտքն երեւան կուգայ եւ նրա կարեւորութեան վրայ կը պնդեմ : — Մենք բնաւ հող չենք տարել մեր եկեղեցականներն վիճակի մասին, բնաւ չենք խորհել թէ եպիսկոպոսը կամ վարդապետը իր կեանքն ի՞նչպէս պիտի գործածէ, ի՞նչպէս պիտի դարգանայ :

Պէտք է, եւ մեր առաջին պարտքն է այդ կալուածները շահագործել հայերէ ընկերութիւններ սարգելով եւ ազգին շահաբեր անել. եթէ չ'անենք, մեծ մեղք գործած կը լինիմք : Կուգեմ այս կէտերի վրայ երկայն խօսիլ, բայց այս տեղ երկայն խօսելու տեղը չէ, եւ դուք դիւրաւ հակացող մարդիկ էք, ուստի մնացածը Ձեզ կը թողնեմ մտածել :

Ազգին մէջ ուրիշ մէկ տեսակ եկամուտ էլ կայ, այն է բարեպաշտ ժողովրդեան կողմանէ ժամանակաւ եկեղեցոյ եւ ուրիշ բարեպաշտական հաստատութիւններու նուիրուած կալուածներն՝ ինչպէս են, ազարակ, տուն, խանութ, հող, եւայլն, որոնց հասոյթին մէկ մասն եկեղեցոյ եւ միւս մասն դաստիարակութեան յատկացուած են եւ այսօր բնաւ չ'ըխտեմք թէ ինչ վիճակի մէջ են այդ ազգային եկամուտներն :

Տնտեսական Խորհուրդը իր բանբերները եւ մուգարաններ ցոյց կուտայ, բայց բնաւ այդ եկամուտներու վրայ չ'խօսիր եւ մի դանկ ցոյց չ'ուտար : Օրինակի համար, չ'առէր թէ ճիւղ ունիոյ եւ կամ Երզրուովի եկեղեցին որ սա չափ եկամուտ ունի, ինչպէ՞ս կը մատակարարուի, ինչ կը լինի, վասնզի այդ եկամուտներն երկու տեսակ են, կան որ միայն տեղական եւ կան որ ընդհանուր ազգին սեպական են : Այս հսկողութիւնն ալ պէտք է ի դարձ դրուի որպէսզի արդիւնաւորի վարչութեան ձեռքով :

Երրորդ խնդիր մ'ալ յուզուեցաւ հոս, այն է դաստիարակութեան խնդիրը : Բայց այդ մեծ խնդիր հազիւ շխտուային—Գերմանիոյ մէջ քիչ մ'առաջ զնացել է, իսկ Ֆրանսայի եւ Իտալիոյ մէջ ետ մնացել, եւ մենք որ չ'են

չնորհք ժողովրդային լեզու մը չ'ունինք, կուզեմք զրանց հետեւիլ եւ կատարելապէս զմեզ խաբել : Արդարեւ ծիծաղելի է այս : Ազգի պարտքն է միայն ազգային դաստիարակութիւն տալ, օրինակի համար, ազգային ուսմունք, դիտութիւնք եւ դպրութիւնք, որոնք են կրօնական լեզու, գրականութիւն հայրենեաց, ալխարհական եւ եկեղեցական պատմութիւն եւ այլն, եւ ոչ թէ՛ շիմի ու Ֆիզի ու այլ եւ այլ Եւրոպական դիտութիւններ պահանջել Պատրիարքարանչն :

Թող մեր հող եւ որականները յորդոր կարգանայն ամեն հայերու, որոնք օտար երկիրներու մէջ պանդուխտ՝ հարստացել եւ մոռացել են հայ ըլլալնին, թող յիշեցնեն անոնց թէ ազգ ունին, կրօնք ունին, եկեղեցի ունին, եւ թէ խղճի պարտք է կտակ անել Ազգին : — Մի օրինակ յառաջ բերեմ :

1845 ին, երբ հայազգի Սամուէլ — Մուրատի Բատուայի վարժարանը Բարիզ փոխադրուեցաւ, եւ Բարիզ ուսանող էի, եւ լսելով որ ազգային մէկ դպրոց բացուել է, փափաքեցայ եւ յաջողեցայ հոն մտնել : Սամուէլ — Մուրատ, որ 81,000 անգլ. լիրա կտակած էր այդ վարժարանին, երկու որդի ունէր. դժբաղդութիւնը տե՛ս որ տարի մ'առաջ, մէկ օր երբ Ս. Պատրիարքի զոյն էի, ուր ներկայ էր նաեւ Տ. Խորէն Սրբազան, Սամուէլի որդին որ ձօն — Մուրատ կ'ստորագրէ, նամակ մը գրելով Ս. Պատրիարքին, ողորմութիւն խնդրած էր. Ս. Պատրիարքն ինչ եւ է, անմիջապէս հանդանակութիւն մ'անելով, զրկեց : Բայց կը տեսնէք թէ 81,000 ոսկոյ հարստութիւնը մնացել է ազգին կտակուելով, եւ մնացած բոլոր հարստութիւն որ մօտ 15,000,000 Ֆրանք է եղել, փճացել եւ որդին օգնութեան կարօտ է մնացել :

Ուստի եզրակացնելով, այս մէկ քանի միջոցներն կ'առաջարկեմ ազգային անուկի վիճակն բարւոքելու եւ դաստիարակութեան կարենալ օգնելու համար :

(Աղաբէզեանց Մ. էֆէնտի խօսքն վերջացնելով, իւր հետեւեալ առաջարկն կը յանձնէ Դիւանին :)

« Աղգային Վարչութիւնն ամեն բանէ առաջ հոգի և փոյլթ տանի, աշխարհականնով և եկեղեցականով խառն մի մնայուն Մասնաժողով հաստատել, պաշտօն տալով նրան, որ՝ նախ Հայոց Աղղն որ Օսմանեան երկիրումն է, որքան կանգուն և փոյլ եկած յանգած վանքեր ունի, եկեղեցիներ ունի և ատոնք որքան հոգեր, արտեր այգիներ և այլն ունին, դրանց հէօքները, Բաժնեւորն և այլ բաները կան թէ չէ և ի՞նչ արժողութիւն ունին, քննէ ու իմանայ և արձանագրէ :

Երկրորդ, Աղղի մէջ եղած եկեղեցական կալուածներէ մի ցանկ շինել և որոշել դրանց մէջ թէ որո՞նք են տեղական կամ մասնական և որո՞նք են ընդհանուր և Աղղային, վասն զի թէ Էյմիսիանի և թէ Երուսաղեմի վանքերի կալուածները կան որ տեղականներէ կամ մասնականներէ հետ խառնուած են ու կորած, Այդ մեր նախնեացմէ մնացած եկեղեցական կալուածներէ եկամուտներն պէտք է որ մեր աղղային ու եկեղեցական Վարչութեան օրինաւոր սեպականութիւն լինի և այդ արդիւնքներով թէ ինքնիրան պահպանէ և թէ աղղային դատարարութեան տայ, Այսինքն մի խօսքով, դրանց արդիւնք միմիայն Աղղային և եկեղեցական Վարչութիւնն վայելէ Ընդհանուր ժողովոյ պատասխանատուութեան ներքեւ :)

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Բեմն էլեկով) Երեսօրհան Տեառք. մի կարծիք թէ երկար.

օրէն պիտի խօսիմ եւ Ձերադ էֆէնտի դիտողութեանց կէտ առ կէտ պիտի պատասխանեմ. նա ինդրէն դուրս այնպիսի առարկութիւններ եւ ակնարկութիւններ այլ բրաւ, որոնց կրնայի պատասխանել ոչ թէ վերոցական խօսքերով, ինչպէս ինքը բրաւ, այլ զրական փաստերով :

Սակայն կ'երեւի թէ Ձերադ էֆէնտի ոչ միայն իմ անձիւ, այլ եւ այս Աղղային ժողովոյ հետ դործ ունի եւ հաշիւ առնել կուզէ զի իւր ատենարանութեան կարգին մէջ քանիցս յանդիմանութիւն ուղղեց ժողովիս, իբր թէ դանդաղ կամ անհոգ վարուած ըլլայ կըրթական ինդրոյն մէջ, Իփէքճեանի ծրարին մասին . . . :

ՁԵՐԱՋ Մ. ԷՖ. — (Ընդմիջելով) Ժողովոյ փոքրամասնութեան դէմ միայն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Բայց ժողովոյ մը փոքրամասնութիւնն ի՞նչ կրնայ ընել, երբ մեծամասնութիւնը անոր հետ չ'է. ձեր աղղիտողութիւնը տրամաբանական չ'է : Իմ դիտցածս սա է, եւ ատենագրութիւններով կըրնամ հաստատել թէ, ինչ ինդիր եւ ծրարիր որ եկած են Վարչութեանց կողմէն, եւ ստիպողականութիւն ստացած, ժողովոյ զանոնք նկատողութեան առած է, ընդունելով կամ մերժելով կամ բարեփոխելով. վերջապէս միշտ նկատողութեան առած է եւ անպատասխանի թողած չ'է : Իփէքճեանի կրթական ծրարին եկաւ պատժօնական դրութեանց կազմակալ Վարչութեան. ստիպողութիւն տրուեցաւ եւ յղուեցաւ 'ի նախաքննութիւն երկամսեայ պայմանաժամաւ. քննող Ատենապետաց Դիւանին անդամ էի եւ ես : Ծրագրին ինչ ինչ սկզբնական կէտերուն համաձիտ չ'էի ես. տեսայ որ անկարելի պիտի ըլլայ վիճաբանիլ. անմիջապէս հրաժարեցայ ատենապետութենէ, եւ իմ տեղս Յ. Արշակ էֆէնտայն նշանակուեցաւ իբր Ատենապետ նոյն ժամանակի Համարակալութեան Դիւանի, որպէս

զի նա մասնակցի ծրագրին քննութեան ։ Վերջապէս քննուած եկաւ ծրագրին առ ժողովս, բայց ոչ այդ պատրաստող Վարչութիւն մնացած էր, եւ ոչ ալ յաջորդ Վարչութիւն տէր կեցաւ այդ ծրագրին ։

ՉԵՐԱՋ Մ. ԷՖ. — (Ընդմիջամաբ) Բայց ես տէր կեցայ այդ ծրագրին ։

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այդ ծրագրին պատրաստութենէն յետոյ Չերագ էֆէնտի Վարչութեան Ուսումնական Խորհրդոյ անդամ կ'ընտրուի, եւ կարծեմ այդ պաշտօնը մէկ կամ մէկուկէս տարի կը վարէ . եւ փոխանակ իւրեւ կրթութեան պաշտօնէս այդ ծրագրին պիտոյքը նկատողութեան առնելով, առաջարկութիւն ներկայելու առ Քաղաքական ժողով եւ ասոր միջոցաւ առ Ազգային ժողով, բնաւ ձեռքն անգամ չ'առնուր ։

ՉԵՐԱՋ Մ. ԷՖ. — Այդպէս չ'է ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մի՛ ընդմիջէք, Չերագ էֆէնտի ։

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Ինչ որ ալ ըլլայ, Չերագ էֆէնտի Ուսումնական Խորհրդոյ պաշտօնավարութեան որով կըրթական օրինաց ծրագրին նկատմամբ Վարչութեան կողմէ բնաւ առաջարկութիւն մը չ'է եկած ժողովիս . ըսելէ որ ինք այդ ծրագրին կարեւորութիւնը չ'է զգացած ։ Սակայն կը փութիմ յաւելուլ թէ, արդի Ուսումնական Խորհուրդը, ինչպէս կը կարդանք լրագրաց մէջ, կրթական օրինաց պիտոյքը նկատողութեան առնելով, Իփէքճեանի ծրագիրը մաս առ մաս քննելու եւ մեր արդի պիտոյից համաձայն զայն պատրաստելով, Վարչութեան միջոցաւ, Ազգային ժողովոյ քննութեան եւ վաւերացման ներկայել որոշուած է. այն ատեն ժողովս ալ իւր պարտքը կը փու-

թայ կատարել ։ Ուրեմն անտեղի է Չերագ էֆէնտի կրթական ծրագրին մասին ժողովոյ վերագրած դանդաղութիւնն կամ անհոգութիւնը ։ Իսկ բոլորովին ծիծաղելի է Չերագ էֆէնտի այն առարկութիւնը թէ՛ ինք ամենուրեք ժողով գումարել առաջարկեր է կըրթական ծրագրին համար, եւ ոմանք՝ որ այժմ կրթութեան պիտոյքը կը փաստաբանեն, ընդդիմացեր ու չ'են ընդուներ, ուստի անոնք կրթութեան բարեկամ չ'են եղեր, քանզի կրնար տառն եւ չ'ինք օրն միանգամ գումարեալ ժողովներուն այդ ծրագրին քննութիւնը պիտի եւ պահանջել, զոր չ'է ըրած . (առ Չերագ էֆ.) Դուք գիտէք թէ ամեն օր ալ նիստ ըլլայ, ես կրնամ զալ, ինչպէս նաեւ դուք կրնաք գալ . բայց զորձ ունեցող եւ ընտրութեան ներքին ի՞նչ իրաւամբ կրնաք ըստիպել ։

(Ընդհանուր ծիծաղ)

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Իսկ բարեբաղդութիւն պէտք է համարել որ յետաձգուեցաւ Թաղային օրինաց ծրագրին քննութիւնը, որ սկսուած էր, եւ զոր բռնող եւ պահանջող Վարչութիւն մը յ'արդ ըլլ տեսանք ։ Այդ ծրագրին համաձայն Թաղերուն մէջ ալ խորհրդարանական կեանք մը պիտի սկսէր, եւ հարցմունք ու հարցապնդմունք տեղի պիտի ունենային, մինչ ատիկ բոլոր Ազգին համար գտնուած մէկ հատիկ Խորհրդարանն, որ այս Ազգային ժողովն է, տանիլ չ'են հողուրժեր, եւ Չերագ էֆէնտի նման Ուսումնական երիտասարդ մը կեղծ կ'ըսէ թէ, ի՞նչու կը նեղէք զՎարչութիւն հարցումներով եւ հարցապնդումներով ։

Եթէ չ'ունինք կրթութեան եւ Թաղային օրէնք, զէթ ունինք հրահանգներ, զորոնախորդ Վարչութիւնք պատրաստած եւ գործադրութեան դրած են, Հրահանգ անունով, քանզի այս ժողովէն վաւերացեալ չ'են որ օրինաց անունն ստանան ։ Այդ հրահանգները

ց'արդ գործադրութեան մէջ են, եւ երբ Վարչութիւն պէտք տեսնէ, կրնայ ներկայել օրինաց ծրագրիներ ժողովուս եւ անոնց վաւերացումը խնդրել :

Ուստի երբէք չ'եմ ընդունիր թէ այս Ազգային ժողովն գանդաղ կամ անհոգ վարուած ըլլայ կրթութեան եւ թաղային օրինաց մասին, եւ յանձաւոր է . կը բողոքեմ այս ակնարկութեանց դէմ :

ԱՐԵԱՎՈՒՆԻ Յ. ԷՅ. — (Ընդմիջմամբ)

Արդար ըլլալու համար Գուրգէն էֆէնտիի դէմ ալ բողոքեցէք, Փափաղեան էֆէնտի, որ վերջինն նստին մէջ ըսաւ թէ « մեր Ազգն շատ պէտքեր ունի զորս հոգալ պարտիւք, բայց այլ է պէտքեր եւ այլ է պարտքն: Արդ, Սահմանադրութիւնը պարտք կը դնէ Ազգին բարոյական պիտոյից հոգ տանիլ, սակայն Ազգն քսան եւ չորս տարիներէ 'ի վեր սոյն պիտոյից գոնացման համար ի'նչ ըրած է. — Ոչինչ »:

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՅ. — Թոյլ կուտա՞ք ինձ, Ատենապետ էֆէնտի, պատասխանել Արշալուծի էֆէնտիի :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ոչ . Ընդմիջմանց պատասխանել ներեալ չ'է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — (Շարունակելով)

Կ'անցնիմ այժմ բուն խնդրոյն :

Նախ եւ առաջ Տնտես. Խորհրդոյ 'ի մասին Ելութացոյցի թուանշանաց տարբերութեան բացատրութեանց վրայ սա կարճ զիտողութիւնը կ'ընեմ թէ, վերջին տարւոյն Հալուեցոյցը, որ հրատարակուեցաւ, չ'համապատասխաներ Ելութացոյցի թուանշանաց սոյսու հանդերձ կ'ընդունիմ որ արդի Տնտես. Խորհուրդն քիչ մ'աւելի համարձակութիւն ունեցեր է, վասն զի զիւրին չ'է Պատրիարքարանի մէջ խնայողութիւններ 'ի գործ դնել : Սակայն պէտք է զիտնալ թէ Տնտես. Խոր-

հուրդն իւր ազդեցութեան շնորհիւ չ'է որ խընայողութիւններ 'ի գործ դրեր է, այլ Կեդր. սնտուկին տնձկութեան սրարաքաներէն ստիպեալ . և Վարչութիւնն ալ սպարտաւորեր է զայն ընդունիլ :

Եւսոյր ընդդիմախօս տեսնարանք համար միտ են սա կէտին վրայ թէ դատարարական եւ գաւառական այցելութեանց և հովուութեանց պիտոյր անհրաժեշտ են, և թէ՛ զբամական միջոցի սրակատարութեան համար անտես առնուած են ց'արդ, հակառակ Ազգային ժողովոյ որչափն : Միայն Չերազ էֆէնտի աւելի յառաջ երթալով, Կեդրոնական վարժարանտանոցի մը հաստատութեան պէտքը մինչեւ մէկ աստիճան ժխտել փորձեց, այն փաստերով, զորս գործածած էր երբեմն Վանայ վարժարանտանոցի փակման մասին :

ՁԵՐԱՋ Մ. ԷՅ. — (Ընդմիջմամբ) Եթէ Վանայ վարժարանտանոցը չ'փակուէր, Միացեալ—Ընկերութիւնը այսօր փակուած էին :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅ. — Մի՛ ընդմիջէք Ատենարանը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — (Շարունակելով)

Թէեւ վերջին ժամանակներս, Չերազ էֆէնտի իբր Ուսումնական Խորհրդոյ անդամ, Կեդրոնական վարժարանտանոցի մը հաստատութեան պիտոյից վրայ սնդած և մինչեւ Ս. Պատրիարք Չոր ավակցութիւնը խնդրած է :

Չերազ էֆէնտի ներկայ ամի Գ. նստին մէջ ստպեալ կը խօսէր. (տես ոտենագրութեան երես 67, սխանակ Բ.) « Ժամ է որ երկու խօսք ընենք այս մասին եւ ցոյց տանք թէ սրբան անիրաւ են անոնք որք անկարելին կը պահանջեն Ներսէս Պատրիարքէն և, երբ չը իրադործուիր անկարելին, կը զրպարտեն զայն իբր անտարբեր ներքին բարեկարգութեան և թշնամիազգ. դատարարական կրթութեան զատը բարեբաղտարար սյնքան ժողովրդական

եղած է մեր մէջ որ անհար է երեւակոյցել Պատրիարք մը և Վարչութիւն մը, որը չ'յցան կան և չ'տենջան կրթական մեծագործութիւն մը կատարել իրենց օրով. այսօր եթէ եկեղեցականաց ամենէն յետինը և ամենէն տղէտը Պատրիարք ընէք, եթէ նա, ձգենք ազգասիրութիւնը, ամենափոքր փառասիրութիւն մը իսկ ունենայ կամ իւր սլաշտօնը պահպանել ուզէ, իւր առաջին փոյթը պիտի լինի յիշատակելի ծառայութիւն մը մատուցանել ազգային դատարարակութեան. ամենէն աննշան Վարչութիւնը պիտի ջանայ նշանաւոր հանգիստանալ կրթական դործ մ'արտագրելով: Զայս ընդունելէ յետոյ իբր ընդհանուր սիւղբունք, զիւրին է համազօրի թէ, եթէ Պատրիարք և Վարչութիւն դեռ չ'կրցան կեդրոնական ուսումնարան մը բանալ, միջոցները սպիկած են իրենց, այսինքն դրամը »:

Մեր ընդդիմաբաններէն կը տարբերինք սա էսական կէտին վրայ թէ, դրամական միջոցի պակասութեան պատճառաւ չ'է որ անուան առնուած է այդ կենսական պիտոյից զուհայտմը: Ապացոյց կ'ուզէք: Ահա ներկայեմ Ձեզ:

Առաջին աղայցոյ: — Տնտես. Խորհրդոյ անդամ Զօսանեան Էֆէնտիի մի յայտարարութիւնը Ձեզ ներկայեմ, զոր ըրաւ 'ի նիտա Յ. 22 Յունիս, երես 105. սիւնեակ Ա. լսելով, « Փարիսեան Էֆէնտի ինքն ալ կը խոստովանի թէ 1878ի Ելմասցոյցը սպարաստուած պահուն, որ 500,000 զրէր. կը յանգէր և ոչ թէ ներկոյ Ելմասցոյցի նման 300,000 զրէրայդ երկու ճիւղերուն (դատարարակութեան և դաւառական պիտոյից) համար 50,000 տկան զուրուչի գումարներ սահմանուած էին թէև, բայց և այնպէս մի դանկ իսկ չ'վճարուեցաւ. լսել է թէ նոյն տանն ալ, յ'որում Պատրիարքարանի հատոյթը զգալի կերպիւ առատ էին, չ'է կարելի եղած այդ սրուշեալ գումարներն վճարել դատարարակութեան և դաւառական այցելուաց: Ուրեմն ինչպէ՞ս կարելի է զու-

մարներ սահմանել այնպիսի Ելմասցոյցի մը մէջ, որոյ ընդհանուր գումարն հազիւ իւր նախորդին կիսուն կը հասասար »:

Երբ Տնտեսական Խորհրդոյ անդամ մը, այս Բեմիս վրայէն, 'ի պաշտօնէ կը յայտարարէ թէ, 1879ին Պատրիարքարանի հատոյթը զգալի կերպիւ առատ էին, բայց չ'է կարելի եղած այդ սրուշեալ գումարները վճարել դատարարակութեան և դաւառական այցելուաց. պէտք է լաւ ուշադրութիւն ընել տնոր և վրէժ սրուել թէ ի՞նչ է պատճառն որ կարելի չ'է եղեր վճարել դատարարակութեան և դաւառական այցելուաց օրուշեալ գումարները:

ԶՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Զ'են տուեր:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Արդէն Համարակութեան Դիւանի Ա. Տեղեկագիրն կը բացատրէ թէ, դատարարակութեան ծախքէն բնա բան մը վճարուած չ'է և դաւառական այցելուաց և հովուութեանց ծախքէն վիճքը դումար մը վճարուած է. իսկ Պատրիարքարանի պաշտօնից 26,845 զրէր. Պատրիարքարանի կարասեայ և նորգութեան համար 5592 զրէր. աւելի վճարուած են: Ուրեմն եթէ կարելի ըլլար կամ կամք ըլլար, Ելմասցոյցն դուրս եղած այդ ծախքերն կրնային յատկացնել դատարարակութեան և դաւառական այցելուաց:

ԶԵՐԱՋ Մ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Որովհետեւ թշնամի են դատարարակութեան:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես իրողութիւններն ներկայեմ, ժողովն թաց դատէ թէ ի՞նչ է պատճառն որ կեդր. սնտուկն կարող ըլլաւ չ'վճարել, Ելմասցոյցէ դուրս ծախքեր վճարուել են, և դատարարակութեան համար դանկ մ'անգամ վճարուած չ'է: Ուրիւ ապացոյց: — 1880 Դեկտեմբեր 19ի

Իհատին մէջ դաստիարակութեան համար որոշուեալ 50,000 զուլուշին անվճար միտարն նը-
 հատմամբ ըրած հարցապնդմանս վիճարանութեան միջոցին ներկայած եմ պաշտօնագիր մը, զոր նոյն ժամանակի Ուսումնական Խորհրդոյ կողմէն ընտրեալ օժանդակ Մասնախորհուրդն ուղղած է առ Ս. Պատրիարք Հայրն: Այս պաշտօնագիրն որ նոյն նստի ստեղծագրութեան մէջ արձանագրեալ է յ'երես 402, կարգամ :

Ս. մենագատիւ Ս. Պատրիարք Հայր.

Կը յիշէք անշուշտ որ անցեալ օր Ուսումն. Խորհրդոյ և Օժանդակ Մասնախորհրդոյս անդամոց ստորագրութեամբ գրութիւն մը ներկայելով Ձեր Բարձր Սրբազնութեան, խնդրեցինք հրամայել առ որ անկ է, Օժանդակ Մասնախորհրդոյս անդամոց Մայրաքաղաքիս վարժարաններն ըրած այցելութեանց առթիւ եղած 300 զրուշի ծախքերն վճարել: Ձեր Բարձր Սրբազնութիւնն սոյն խնդիրն Տնտեսական Խորհրդոյ յանձնած ըլլալով՝ յիշեալ Պատուարժան Խորհուրդն Մասնախորհրդոյս Դիւանագպրին կը յայտարարէ թէ՛ ինքն չ'ընդունիր այդպիսի սկզբունք մը և հետեւաբար չը կրնար վճարել նոյն ծախուց գումարն:

« Ուսումնական Խորհուրդն երբ 1879 Դեկտեմբեր ամսոյն Պատ. Քաղաքական Ժողովոյ հաւանութեամբն պաշտօնէ կոչեց զմեզ, հրահանգ տուաւ նաև Մայրաքաղաքիս ազգային վարժարաններն այցելել և անոնց բարեկարգութեանը հսկել: Մասնախորհուրդս յ'օգուտ դաստիարակութեան յանձնուաւ սոյն պաշտօնն և իւր ամենածանր գործոց հետ փութաց նաև միշտ այցելել բոլոր ազգային վարժարաններն, ա-

նոնց բարեկարգութեան հոգ տանել, եղած վէճերն ըննել և կարգադրել և մի քանի փակեալ վարժարաններ իսկ բանալ: Այս այցելութիւններն անշուշտ ծախքով կը լինէին. Մասնախորհրդոյս ըրած այս ծախքերն չոգենաւի, նաև կի, կառքի և ձիու վարձքեր էին և ո'չ ուրիշ բան: Երբեմն այս այցելութեանց պաշտօնն ունեցող անձանց 1500 զրշ ամսական կը վճարուէր, որք սակայն ակնկալեալ արդիւնքը չարտադրեցին, բայց այսօր Մասնախումբս իւր պաշտօնըն խղճի մտօք կատարելով հանդերձ տասն ամսուան միջոցին մէջ հաղիւ 300 զրշի ծախք մ'ըրած է և այն իսկ չվճարուիր:

Մասնախումբս իւր պաշտօններովս ծանրաբեռնեալ կը փափաքի միշտ իւր գործերն ընդ փոյթ կարգադրել, շատ անգամներ իսկ իւր Դիւանէն ելած գրութիւններն ժանակին իրենց տեղերն հասցնելու համար իւր քսակէն ծախքեր ըրած է: Այս վիճակին մէջ միթէ եղած ծախքն մե՞ծ գումար մ'է, որ Պատ. Տնտեսական Խորհուրդն կը զլանայ վճարել:

Մասնախորհուրդս չկարծեր որ յիշեալ Պատ. Խորհուրդն իրաւունք ունենայ այսպիսի որոշում մ'ընելու քանի որ գիտէ թէ ըստ Սահմանագրութեան հրամանն Ձեր Բարձր Սրբազնութեան՝ և որոշումն Քաղ. Ժողովոյ կը վերաբերի և միայն ի դիտութիւն կը հաղորդուի իրեն, այն ալ ելմտացոյցին մէջ չ'սահմանուած ծախուց համար և ոչ թէ դաստիարակութեան վերաբերեալ ծախուց՝ որուն համար Ազգային Ժողովն արդէն 50,000 զրշ որոշած և Քաղ. Ժողովոյ յանձնած

է ի դործադրութիւն, հետեւաբար ի՞նչ իրաւամբ կը սերտէ Տնտես. Խորհուրդն այնպիսի վճարում մը որ Բարձր Սըրբադնութեանդ կողմէ հրամայուած է :

Արդ՝ եթէ օրէնք և իրաւունք է որ անձնուիրաբար աշխատող պաշտօնեայք պարտաւոր ըլլան միանգամայն այս կարգի ծախքերն իրենց քսակէն ընելու, թող բարեհաճի Բարձր Սըրբադնութիւնդ հրամայել Մասնախմբիս և պատրաստ եմք անմիջապէս կրել այդ ծախքն :

Ուստի կը խնդրեմք որ բարեհաճիք կամ վերոյիշեալ հրամանն ընել մեզ անմիջապէս և կամ հրաման ապլ Կեդր. Մատուկի Գանձապահին Մասնախմբիս այցելութեանց ծախքերն՝ որ վերոյիշեալ գումարէն զատ 77 դրշ. ևս ըլլալով՝ 377 դրշի հասած է, վճարել անյապաղ :

Օժանդակ Մասնախորհուրդս կը յուսայ որ Ձեր Բարձր Սըրբադնութիւնն ի նկատի առնելով իւր այս խնդիրն կը բարեհաճի պարտ ու պատշաճ տնօրէնութիւն մ' ընել :

Մնամք խորին յարգանքօք

Ի դիմաց Ուսումն. Օժանդակ Մասնախորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Դ. Գուլումեան Բ. Ղապրոսեան

4 Հոկտեմբեր 1880

Ի Պատրիարքարան-Հայոց

Կ. Պոլիս

Այս պաշտօնագրին մէջ ուշադրութեան արժանի երկու կէտեր կան, նախ պահանջուած գումարին աննշան լինելն, երկրորդ նոյն ժամանակի Տնտես. Խորհրդոյ պաշտօնական յայտարարութիւնն թէ՛ ինքն չ'ընդունիր այդպիսի սկզբունք մը և հետեւաբար չ'կրնար վճարել նոյն (300 դրշ.) ծախուց գումարն :

Իսկ Ս. Պատրիարք Հայր սոյն պաշտօնագրին վրայ նշանակուած է հետևեալը .

« Պատուարժան Տնտեսական Խորհրդոյ իրաւասութեանն կը պատկանի, պէտք է որ անոր հաճութեամբ վճարուի որ և իցէ նոր տեսակ ծախք, ևս անձնապէս կը հաւանիմ որ ամեն ծառայողք ոչ միայն իրենց ծախքը՝ այլ նաև և լի ու լի վարձքը ստանան եթէ սընտուկը կարողութիւն ունենայ » :

Պ. Կ. Ն. Ե.

Ս. Պատրիարք Հայր ալ նոր տեսակ ծախք կը կարծէ այն գումարը, զոր կը խնդրէ օժանդակ Մասնախորհուրդը մինչդեռ Ազգային Ժողովն 30,000 դրշ. որոշած էր դաստիարակութեան սխոլայից նոյն թեւականէն մէկ տարի յառաջ և Կեդր. մտուղի անկախող չ'էր 300 դրշ. վճարելու . բոց իբրև սկզբուն խնդիր մերժուած էր այդ վճարումը : Գիտցանքեմք արդէն զտունն թէ, Պատրիարքարանի մէջ ևս հասնողունը կայ թէ, Կեդր. մտուղին հասցոյթը Պատրիարքարանի պաշտօնէից և ներքին տնտեսից միտն յատկացեալ են, և Ս. Պատրիարք Հայր միևնոյն նիտանն ՚ի 19 Գեկտեմբեր 1880, յայտարարած է (տտենադրութեան երես 400, Ս. սխեմակ) թէ « Կեդր. մտուղին եկած ստուգուած կը պէտքին հազիւ կ'օգտէ » . նոյն նիտանն ընթաց նախն մէջ ըլլուած է արդէն Ն. Սըրբադնութեան սա համալրումը թէ՛ հոցադործին դրամը մտաճանտին տրուելով սարսք վճարուած չ'ըլլար և թէ՛ Պատրիարքարանի համար առնուած դրամը Պատրիարքարանի պիտոյից պէտք է գործածուի և եթէ յաւելնայ՝ այն առնէ ուրիշ կարեւոր սխոլայից կրնայ գործածուի :

Արդ, այժմեան Արևմտայոց տարեկան 300,000 դրուշի հասցոյթ կը նշանակէ, և կը սեն թէ Կեդր. մտուղին անկարող է դատարարութեան համար դրամ տուլ 1879 և 1880 թուականին Կեդր. մտուղին հասցոյթն 400—450—500,000 դրուշի երած է, և դարձեալ րան մը վճարուած չ'է դաստիարակութեան հաս-

մար : Երբ այժմեան 300,000 զրուով կը բաւականան Պատրիարքարանի պաշտօնեայք և պիտոյք , կարելի չէ՞ր արդեօք որ 1879 ին և 1880 ին ալ մինեոյն գումարով բուսականանային , և տարեկան 100—150—200 հազար զըրուէ աւելի գումարներն դաստիարակութեան և գաւառական այցելութեանց և հովուութեանց նման կենսական պիտոյից գործածուէին :

Պատրիարքարանի պաշտօնէից և ներքին պիտոյից համար որչափ գումար հարկաւոր է , որպէսզի անկէ աւելին ուրիշ կանոնաւոր պիտոյից գործածուի , ասոր պատասխանն տուած է պաշտօնապէս նոխորդ Տնտես. Խորհուրդը , 42,575 ոսկոյ տարեկան Եւմոսացոյցով :

Այս հսկայ Եւմոսացոյցին մէջ , բովանդակ գումարին $\frac{1}{10}$ ք , 420,000 զըշ . կեդրոնական վարժարանին , $\frac{1}{10}$ գաւառական այցելութեանց և 76,000 զըշ , ալ ազգային վարժարանաց նըստատ յատկացած են . ընդ ամենը 346,000 զըշ . որ ըսէ՛ք է բովանդակ գումարին $\frac{1}{11}$ ք . իսկ անդին $\frac{3}{11}$ ք , այսինքն 94,500 զըշ . դարձեալ Պատրիարքարանի պաշտօնէից և ներքին պիտոյից յատկացած են . 120,000 զըշ . Ս. Պատրիարք շոր և 430,000 զըշ պաշտօնէից , և այլն : Արդ Պատրիարք և այլ պաշտօնեայք անխտան իրենց ամսաթշաւին պահանջելու իրաւունք ունին , և կը յիշէք թէ Զօպանեան էֆէնտի ըսաւ թէ պաշտօնեայք ալ բերան ունին հոց կուտեն

ԶՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Այ՞, հոց կուտեն պաշտօնեայք , զի աշխատողն իւր վարձք կը պահանջէ :

ՓԱՔԱԶԵԱՆ. Ս. ԷՖ. — Այդ յայտարարութիւնն նոր չէ . քանի տարիներէ ի վեր ըսած ենք և կը ըսենք միշտ . մեր խնդիրն է աւելորդ պաշտօնեայքեր չ'ունենալ և չարազանց թռչակներ չ'վճարել , որպէս զի կեդր. սնտուկը միշտ անկարող չ'մնայ ազգին կեն-

սական պիտոյից համար ևս վճարումներ ընելու : Ուրեմն կեդր. սնտուկն եկող հասոյթներն ընէ նախ Ս. Պատրիարք շոր և պաշտօնէից թշտակաց և ապա հետագրի , թղթատարի և այլ ներքին ծախսոց վճարման պիտի յատկանան : և այս վճարումներն յետոյ՝ երբ դրամ աւելնայ , ան ատեն կեդր. վարժարանին , Գաւառական այցելութեանց և ազգային վարժարանաց պիտի վճարուի : Մէկ խոսքով կեդր. սնտուկը մասձ գրածը , մինչև 94,4000 զըշ յատկացեալ է պաշտօնէից և այլ ներքին պիտոյից . երբ 942,000 զըշ ըլլայ , աւելցած 500 զըշ ու անկէ աւելի գանձուած գումարներն պիտի յատկանան դաստիարակութեան և այլն :

Եւ այս վիճակին մէջ կ'ուարկեն թէ , դրամ գտէք , դրամ ճարելու միջոց ցուցցէք : Իրենք արդէն իրենց գործնական ընթացքով դրամի ազրկութիւնը փակեր են և կը ջնտնտառաւել փակել և կ'ազաչեն առ մեզ թէ զըրամ ճարեցէք : Անտարակոյս երբ 500,000 զըշ հասոյթ կ'ունենայ կեդր. սնտուկն , և զանկ մը չ'վճարուի դաստիարակութեան պիտոյից , և իրարիկ գումարի մը վճարման մասին բուռն ընդդիմութիւն կ'ըլլայ , երբ 1,257,500 զըշ չ'հսկայ Եւմոսացոյցի մէջ , դարձեալ պաշտօնեաներն և այլ ներքին պիտոյներն մեծ տեղ կը բռնեն , անտարակոյս Եւմոսացոյցի հասոյթք ալ 300,000 էն կ'իջնէ 400 ի , 300 ի և թերևս գալ տօրի ալ 250,000 զըշի , և առաւել նուաղ գումարներու : Ի՞նչ է պոտձառն որ Միացեալ Ընկերութիւնք , Ազդանուէր Հոյուհեայ և Գպոցասէր-Տիկրանց և այլ ազգային ընկերութիւնք և հանգանակութիւնք յաճողութիւն կը գանեն ազգին մէջ , դրամ կը ճարեն , և կեդր. սնտուկն կը զրկուի իր արդէն ունեցած հասոյթներէն : Բարոյական իշխանութեան մը մէջ , բնորոյական միջոցներ կը հարկաւորեն ժողովարդն յորչորեւն . որ իւր տուրքը տայ : Անուշտաղը պէտք է ունենայ Պատրիարք մը , որոյ թշտակին գումարըն պէտք է լինի սոցնախի , որչափ որ տէար

է. անգամ մը Մէրեմ-Գուլի էֆէնիան, Եւստոյցյի պատրաստութեան սրահուն, Պատրիարքական թուակին 5000 դրուշին անբուականութեան վրայ խօսած ատեն ըսած է, «Եթէ Պատրիարքին ամսականը ազգին պատուոյն համաձայնեցնել ուզենք պիտո՞ւմէին մէջ չի սըղմիր» : Պատրիարքարանի Գիւանադպիր և այլ պաշտօնեայք այնքան թիւ պէտք է ունենան, որչափ որ պէտք են. և ասոնց ամսական թուշակները միանգամ ընդ միշտ որոշուին, որ պէս զի ոչ ամեն նորեկ Վարչութեան անդամներէ իրենց ամսականի յաւելում խնդրեն կամ ակնկալեն, և ոչ ալ Վարչական անդամք մտքը արեւոյնեւ համար նոր պաշտօնեայ աւելցնեն . . .

ՀԱՂԱՅԵԱՆ Բ. ԵՒ ԱՅՎԱՅԵԱՆ Ն. Է. ՅԷՆՏԻՔ — (Անդամք Քաղ. ժողովոյ) Ապացուցիք :

ՁԵՐԱՋ Մ. ԴԵՑ. — Խորձանքէ դատ ուրիշ բան ըրած չ'ունի արդէն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Ամենուն գիտցած բաներն են. եթէ քննութիւն բանալ տար, սրտորատ եմ ապացուցանեմ չին եւ նոր օրինակներով : — Ուրիշ ապացոյց մ'ալ ներկայեմ և կնքեմ խօսքս : 1879 Նոյեմբեր 2 նստին մէջ Ազգային Վարչութեան Քաղաքական ժողովը իւր Գիւանին ստորագրութեամբը հետեւեալ պաշտօնադիրը մատուցած է առ Ազգային ժողով .

Վսեմափայլ Ատենապետ փաշա Ազգային ժողովոյ .

« Ազգային ժողովը բարեհաճեցաւ ներկայ տարւոյ Եւստոյցյը վաւերացընելու առթիւ ընդունելի զաստիարակութեան համար Վարչութեան կողմէ առաջարկուած 50,000 դրշի վարկն, և յանձնարարել ընդ նմին Վարչութեան

որ տեղեկագրէ թէ ի՞նչ պէտքեր դուհացնելու պիտի ծառայէ յիշեալ գումարն : Սոյն յանձնարարութեան համաձայն, Քաղ. ժողովը Ուսումնական Խորհրդոյ հետ համախորհուրդ որոշեց կեդրոնական վարժարանի բացման ծառայեցնել յիշեալ գումարն, այն վարժարանին՝ որոյ պէտքն ՚ի վաղուց գրադուած և Ազգային ժողովէր եւս ճանչցուած է, և որոյ շէնքն ալ արդէն պատրաստուած է ՚ի Ղալաթիա : Այս նպատակաւ Ուսումնական Խորհուրդը յիշեալ գումարին դործածութեան և կեդրոնական վարժարանին բացման համար ծրագիր մը պատրաստելու հրահրուելով, պէտք եղած ծրագիրը ներկայացուց յատուկ տեղեկագրով մը, զոր Քաղ. ժողովն ընդունելով նոյնութեամբ կը ներկայէ Ազգային ժողովոյդ և կըսպասէ Ձերդ հրահանգին ՚ի պարտ ու պատշաճ գործադրութիւն » :

Մնամբ խորին յարգանքօր
 ՚ի դիմաց Քաղաքական ժողովոյ
 Ատենադպիր Ատենապետ
 Մ. Գ. Միւսիկեանիսեան Ս. Մ. Գեյլիկճեան
 20 Հոկտեմբեր 1879

Հարկ չեմ համարիր այժմ ընթեռնուել Ուսումնական Խորհրդոյ տեղեկագիրն և ծրագիրն, որք նոյնպէս արձանագրեալ են 1879 Նոյեմբեր 2ի նստի ատենագրութեան մէջ : Ուսումնական Խորհուրդն իւր ծրագրով կ'առաջարկէ որուշեալ 50,000 դրուշը Ղալաթիոյ կեդր վարժարանին յատկացնել և բանալ դայն : Նոյն նստին մէջ երբ վիճարատութիւնը ընդարձակուեցաւ, Ս. Պատրիարք Հայրն խօսք տուաւ, և հետեւեալ կարևոր յայտարարութիւններն ըրաւ, որք Ձերայ էֆէնիանի այժմեան փոստերուն հերքում մ'են :

(Փախագեան Էֆէնտի կ'ընթեռնու)

«ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ . — Ինչ որ թիւր ու զէմ խօսուեցաւ խնդրոյն վրայ , մտիկ ըրի վիճարանութեան սկիզբէն . այս առաջին անգամը չէ որ Կեղրոնական վարժարանի խնդրուի կը յուղելի և վիճարանութեան նիւթ կ'ըլլայ , բայց դեռ չ'կրցաւ իրականանալ , չ'կրցաւ մարմնաւորիլ այն խորհուրդն , որու կարճարութիւնը ամենրը կը դաւանին և կը հաստատեն : Զիս ճանչցողները գիտեն որ տեսականէն աւելի գործնականին կը հետևիմ , և այսօրուան գործը վաղուան թողուլ չեմ ուզեր : Հերիք այսքան ժամանակի կորուստ , այլ ևս գործել պէտք է , կրթութեան խնդրոյն մէջ մանաւանդ վարանումներն և յետաճումներն անգարմանելի կորուստներ կը ծնին : Ինչ օգտուար խորհուրդներ որ ունիք այս մասին՝ սիրով կ'ընդունիմ , և կ'օրհնեմ զձեզ որ լաւագոնին կը բաղձաք : Բայց այս անգամ որ Ուսումնական խորհրդոյ ծրագիրը Վարչութեան հետ ընդունեցինք , սերիչ նարատակու չէր , այլ գործադրութեան սկիզբ մը տալու , փորձ մ'ընելու համար էր միայն . վասն զի միշտ փորձն իմաստուն առաջնորդ է ամեն գործի մէջ : Թողէք ուրեմն որ Ուսումնական խորհուրդն՝ որ բարեյօժար արամադրութիւններ ցոյց կուտայ , և գործելու ետանդ ունի , փորձ մ'ընէ , թողէք որ իւր ծրագիրն գործադրելու աշխատի Ուսումնայ մէջ մանկտան մարդելու և դաստիարակելու համար՝ քաջաւորժ օւսուցիչներու և ընտիր վարժապետներու կարօտութիւն ունինք . ի՞նչ օգուտ կրնան ունենալ հազարաւոր դպրոցներ , երբ օւսուցիչներ և դաստիարակներ կը սրակին . այս մեծ պակասը լրացնելու տահմանուած է ահաւասիկ Կեղր վարժարանը , ուստի ամեն բունէ աւելի անոր հաստատութեան պէտք է հող տանինք , առաջին գործադրելի խնդիրն այս է » :

Ս. Պատրիարք Հօր այս յայտարարու-

թեան վրայ , Ազգային ժողովն ըստ առաջարկութեան , Ամենապատեալ Արքայան Նախագահ Հօր կ'որոշէ ստուար մեծամասնութեամբ՝ Կեղրոնական վարժարանի խնդիրն իւր վարչական խնդրի՝ վերադործունել Վարչութեան ի գործադրութիւն :

Նոյն թուականէն ց'արդ հինգ տարի կ'ըլլայ , և տակաւին չբողոքուեցաւ Կեղրոնական վարժարանը . Ազգային ժողովոյ այդ որոշումն մնաց անզորժադրելի :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — (Ընդմիջմամբ)
Ո՞ր թուականին որոշուած է :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — 1879 թ. :

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. — Բայց հասցիք պէտք էին , և ըստ որում չ'զոյսոյան , ուստի այդ որոշումն չ'գործադրուեցաւ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով)
Սրբազան Պատրիարք Հօր յայտարարութեան մէջ կարելոր մաս մ'ալ կար , զոր ընթերցած օրհնու զանց ըրի , և ոյժմ՝ սխալ կար դամ :

« Արդէն գործը նիւթական դժուարութիւններով լի է , այժմէն ըսեմ ահաւասիկ որ Կեղրոնական սնտուղը չ'կրնար այդ բուէարկեալ 30,000 զրչի , գումարը հատուցանել , մինչեւ որ իւր հաստիճից աղբիւրները չ'կարգադրուին » :

Այս յայտարարութիւնն , ինչպէս կ'երեւի , խնդրոյն ստիպողականութեանն առջեւ սարգելի կերպարան մ'ունի : Ասկայն ստոր մէջ խի իրաւացի կարձ կայ . երբ հասցիք կը սրակին , ինչպէս զիտել տուաւ Զերադ Էֆէնտի , երբ Կեղր սնտուկն անկարող է , ինչպէս կը յայտարարուի այժմ խի , դաստիարակութեան կենսական սխտոյցն ինչպէ՞ս կարելի է հոգալ :

Սովոյն տեսներ թէ , իբօք նոյն միջո-

ցին կեղր սնտուակն անկարող էր, Ս. Պատրիարք Հայրն իւր ստորագրութեամբը, մի և նոյն նիստին, յ'անուն Քաղ. Ժողովոյ պաշտօնագիր մը մատուցած է առ Ազգային Ժողով. կորդամ րոյն :

« Վսեմաշուք Ստեփանակոս Էֆէնտի Ազգային Ժողովոյ .

« Ազգային Վարչութիւնը կեղր. Սնտուակին ներկայ տարւոյ Ելմասցոյցին մէջ պաշտօնէութեան թոշակին համար սահմանուած ամսական 15,000 զըշին բաշխուածը կատարելու առթիւ տեանելով որ այս գումարը չ'համապատասխաներ աշխատուող պաշտօնեայնները գոհ ընելու համար, Տնտեսական Խորհրդոյ հետ համախորհուող' հարկ դատեց ամսական 3000 զըշ. յաւելուածական վարկ մ'առաջարկել Ազգային Ժողովոյդ » :

« Ուստի ըստ որոշման Քաղ. Ժողովոյ, որոյ վարկի առաջարկը բերելով Պատ. Ժողովոյդ' կը խնդրեմ որ բարեհաճիք շուտով տնօրէնութիւն մ'ընել, որպէս զի կարելի լինի ամեն պաշտօնէից ամսականն որոշել և զանոնք գոհ ընելըստ արժանւոյն » :

Մնամբ աղօթարար

Պ. Կ.

Ներսես Արքեպիսկոպոս

2 Նոյեմբեր 1879

Արք. Ս. Պատրիարք Հայր, մի և նոյն նստին մէջ, կ'առաջարկէ ամսական 3000 զըշ աւելցնել Պատրիարքարանի պաշտօնէից, զսնտոք գոհ ընելու համար, և կը յայտարարէ միանգամայն թէ կեղր. սնտուակն չկրնար զըրամ տող դաստիարակութեան պիտոյցոյ, յայտարարելով հանգերձ թէ «Կրթութեան խընդրոյն մէջ վարսնուամենքն և յետաճումներն անդարմանելի կորուստներ կը ծնին » և թէ

«ամեն բանէ տեղի կեղր. վարժարանին հաստատութեան ոյնք է հող տանինը, առաջին դարձադրելի խնդիրն այս է» : կեղր. սնտուակն կամ կարող էր և կամ անկարող. ի թէ անկարող էր, ի'նչպէս կ'առաջարկուի ամսական 3000 զըշ վարկ տող պաշտօնէից թոշակին, իսկ եթէ կարող էր այդ 3000 զըշը գէթ վճարել, ի'նչ պատճառաւ դատարարութեան ղիտոյցից վճարել չ'ուզուիր :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Թո'զ լսէ Զերազ Էֆէնտին :

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. — Արդէն կորդացած եմ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Պէտք է նկատել թէ դատարարակութեան մասին Քաղ. Ժողովոյ որոշումը նոյն Ժողովոյ Դիւանը բերած է, իսկ պաշտօնէից թոշակի յաւելման մասին Քաղ. Ժողովոյ որոշումը նոյն ինքն Ս. Պատրիարք Հայր բերած է առ Ազգային Ժողով : Ի'նչ եղաւ Ազգային Ժողովոյ ՚ի մասին կեղրանական վարժարանի հաստատութեան տուած որոշումը : Յայտնի է թէ ց'արդ չ'գործադրուեցաւ, իսկ պաշտօնէից թոշակն 15,000 էն 18,000 ի բարձրացաւ, թէ և Ժողովոյն որոշմամբ. և 18,000 էն մինչև 20,000, 22,000 զըրուի ալ բարձրացաւ, առանց Ժողովոյն հաստատութեան : Եւ այսօր երեսփոխաններ կան, որք կը ջանան արդարացնել դատարարակութեան համար ծախք չ'լինելը, առարկելով թէ կեղր. սնտուակն անկարող եղած է :

Խնդիր է թէ, 1879ին Ելմասցոյցին պատրաստութեան ատեն, ի'նչպէս եղեր է որ վարչութիւնը առաջարկութիւն բերեր է 50000ական դր. յատկացնել դատարարակութեան և դաստատարան սցջելու թեանց և հովուութեանց պիտոյցոյ, և Ազգային Ժողովն ևս ընդուներ և վաւերացուցեր է :

Այդ Ելմասցոյցին պատրաստութեան ատեն Ս. Պատրիարք Հայր ի Պէյքօշ քաղաւած

կը բնակէր, իւր պատճառարանեալ հրամարա-
կանին վրայ . այդ միջոցին առաջարկուեցաւ
և ժողովէս ընդունուեցաւ նաև Տրոյց Կանո-
նագիրը, որ Ելմտացոյցին նման ց'արդ անգոր-
ծողքեկի մնացած է :

Այս ամենէն կը հետեւի թէ, Պատրի-
արքարանի մէջ խորին համոզում մը կայ թէ,
Կեզր, Սնտուկին հասցիթք Պատրիարքարանի
պաշտօնէից և այլ ներքին պիտոյից միայն սե-
լիական են : Եւ այս այսպէս եղած է Յակոբ
Պատրիարքի օրէն սկսեալ : Ես կը յիշեմ թէ
Քէնորք Պատրիարքին օրով իսկ ջանք եղաւ Ս.
Փրկչի վարժարանը համառօտելու և աշա-
կերաներն ցրուելու :

ԶԵՐԱԶ Մ. ԷՑ. — (Ընդմիջմամբ) —
Ամեն Պատրիարքաց զէմ' ալ այդպէս խօսած էր :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — (Առ. Զերագ ԷՑ.)
Ուրեմն կ'ուզէք որ չխօսի :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՑ. — Զերագ էֆէնտի
ալ Պատրիարքաց պաշտպանութիւնը կ'ընէ :

ԶԵՐԱԶ Մ. ԷՑ. — Ես ռեզոյսին իրականց
պաշտպանն եմ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՑ. — Նախընթաց երօ-
տերէն միոյն մէջ յայտարարեցիք արդէն թէ'
Ս. Պատրիարք Հայրը պաշտպանել յանձն ա-
ռած էք . ես ալ Ազգային ժողովը կը պաշտ-
պանեմ և անոր օրոյժանց գործողութիւնը
կը սահմանջեմ :

(Բազմաբիւ. նստարաններէ ընդմիջ-
մանը :)

ՀԱԼԱՃԵԱՆ Ք. ԷՑ. — Անձնականութեանց
մէջ մի մտնէք Փափաղեան էֆէնտի :

ԶԵՐԱԶ Մ. ԷՑ. — Վոյս, լոյս աղտղա-
կելը ստակ չընէր, զրամ' սէպք է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Զերագ էֆէնտի, ձեր
ընդմիջումներովը կը շփոթէր ժողովոյց հան-
դարտութիւնն և պատկառանքը կը խանգա-
րէք . և եթէ այդպէս շարունակէր, սխիտ
պարտաւորէք զիս 'ի կարգ հրօտիել զՃեզ :
Եւ կը հրաւիրեմ ատենարան էֆէնտին զգու-
շանալ անձնական ակնարկութիւններէ որք
միշտ յուզման տեղի կուտան :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՑ. — (Չարունակելով)
Քէնորք Պատրիարք այնպէս կը կարծէր թէ Հի-
ւանդանոցի վարժարանին ընդարձակութիւնը
Կեզր, սնտուկին բոլոր հասցիթները կ'սպառէ,
և կամ կը խորհէր թէ, եթէ Հիւանդանոցի
վարժարանը փակուի կամ համառօտուի, Կեզր,
սնտուկը եկած գրամները կը մտնն Պատրիար-
քարանի, և իւր պարտաւոր և Պատրիարքա-
րանի այլ պիտոյաները զիւրութեամբ կը հօ-
ղացուին . այս խորհրդով Հիւանդանոցի վար-
ժարանն ցրուելու գործին աջակցեցաւ . թէև
այդ կերպով Կեզր, սնտուկն յուսացուած ըն-
դարձակութիւնը չունեցաւ, ինչպէս որ այժմ'
իսկ կ'երեւի, դասախարակութեան օրոյնալ գու-
մորը չվճարելով, Կեզր, սնտուկին հասցիթն
չուեցաւ, այլ առաւել պակսեցաւ, 300,000
դրշի իջու : Քէնորք Պատրիարքի այս գործն
պախարակելի է . բայց միւս կողմէն Քէնորք
Կաթողիկոս Էջմիածնի մէջ ընդարձակ ձեւա-
րան բացաւ, Ռուսաստանի Հայոց վարժարա-
նոց վրայ մասնաւոր հօգածութիւն ցուցուց,
և այսպէս քուեց իւր Պատրիարքութեան սխալը :
Ստիպան միթէ ստով կը ջնջուի' Հիւանդանոցի
վարժարանին 1889ի կրած հարձանքը սրնա-
մաթեան մէջէն : Կաթողիկոս, Պատրիարք և
այլ ամեն ազգային անհաս, բարի գործ ալ
կրնան գործել, չար գործ ալ . սէպք է բարին
զուլել և չարը սարսաւել . այս է ճշմարտութիւնը
և արդարատէր ընթացքը . այս ինչ գործն աչ-
ղին օգտակար եղաւ և այս ինչ գործն վնաս-
տակար . այս է անկողմնակալ բննագրատի մը
պաշտօնը :

Պէտք է խօսատախանիլ սահայն թէ, կարգ մը անձինք, որոց գործն է՝ ամեն Պատրիարք չըջազատել, մասնաւոր քանր ունին Պատրիարքները մոլորեցնել, և անոնց քննաստիար գործերն անտես ընել կամ իրարին մեկնել, և ասով չարիրն արմատացնել ազգին մէջ, Իրաց այս վիճակն քննադատող կուսակցութիւն, նկատելով թէ չարիրն ուրիշ սղորիւրներ ունի, և Պատրիարքաց անձնականութիւն ստուել գործիք է, յոյսերին կտրած են Պատրիարքային փոփոխութենէն մեծ օգուտ քաղել, զի նորընտիր Պատրիարքն ալ հազիւ տարի մը կրնայ պահել իւր ազատութիւնն և ուր ուրեմն պիտի լինայ այն կարգ մը անձանց ձեռքը, և պիտի ըլլայ եսկի համալ եսկի քաւ : Ուստի իրաց վիճակէն դժգոհ կուսակցութիւնն արմատական բարեկարգութեան վրայ իւր մտադրութիւնն դարձուցած է, և սասը միակ միւրց նկատած է յարգել սալ Ազգային ժողովն և սասը որոշմանց գործադրութիւնը պահանջել : Ուստի այն Պատրիարքներն որ չյարգեցին Ազգային ժողովն և շարունակեցին չըրձողընէ սասը որոշումներն, ինկան : Գրամական լընդիւրներն առաւել արժարձած են ազգին դժգոհութիւնը . և եթէ քանի մը տարիէ չետէ յարացեալ վիճարմութիւններն յիշատակուին, պիտի տեսնուի իմ խօսքիս ճշմարտութիւնը . արդէն դրամականք Ազգին կենսական խնդիրք են . կ'արժէ որ ամեն լուրջ ազգային անհատ, որ հոգ ունի ազգային գործոց, ամենախիստ հսկողութիւն ընէ և պահանջը ունենայ դրամական խնդրոց մասին, և այս խնդիրներն են որ անհանգիստ կ'ընեն մեր հակառակորդները և զվեզ զբարտաւել կուսան անխղճօրէն : Այդպիսի զբարտաւելեան մը եհիժակայ եղաց 1877ին ալ, պատերազմին առեւը, երբ Քրիստոպատը և Օզաէն էֆէնիտիներու չետ ներկայացած էի Ոստիկանութեան անտուջ Ահմէտ Համաթի վաչայի, որտ ի իս մտահեղով լուտութէ — Փափագեանն էֆէնիտի, ամենէն ստուել եկզ դէմ գանգատ կայ . դու Աչալթից մէջ

վարժարան մը հիմներ ես, անոր ալ կարւածներ գտեր ես, և հոն վարժարաններ կը հասցընես . այդ քեօթիւ վարժարաններն Անասուրի ամեն կողմը կը տարածես և անոնց ձեռք բան մ'ընել կ'օգուես : — Այս ստախլի գրպարտութեան արժանաւոր պատասխանը տուինք . և Կոյսերական Կուսակցութիւնը իւր խնստութեամբը հասկցաւ մեր անտեղութիւնը :

Գէորգ Պատրիարքի ժամանակէն սկսեալ Հիւանդանոցի վարժարանին խնդրն այնքան յուզուեցաւ, որ վերջապէս Հիւանդանոցի անտակն բուրսովին անջատուեցաւ, նոյն իսկ Կեդր. անտակէն ունեցած հաստից մասին : Եւ այսօր ամեն Հինգշաբթի օր, Հիւանդանոցի Հոգաբարձութեան կողմէն յատուկ պաշտօնակալ մը կուգայ կը նստի ի Պատրիարքարան, նշանաւորի ժամանակ . և զոչացեալ հաստիցէն Հիւանդանոցի բաժինն անմիջապէս կը գանձէ և կը տանի կը յանձնէ Հոգաբարձութեան : Եթէ այսպէս չընեն, Կեդր. անտակն մտած Հիւանդանոցի սեփական գումարները Պատրիարքարանի պաշտօնակցի և այլ ներքին պիտայից պիտի գործածուին և Հիւանդանոցը պիտի զրկուի : Այժմ Հիւանդանոցին Որբանոց վարժարանն ալ լաւ վիճակի մէջ է աշխատութեամբ Հոգաբարձութեան :

Այսպէս պէտք է ընել նոն դաստիարակութեան կամ Կեդր. Արժարանի, գաւառական այցելութեանց և հօգրութեանց համար որոշեալ գումարներուն գանձումը : Այսօր է ոչ, որչափ ընդարձակուի Կեդր. անտակին վիճակն, այնքան պաշտօնեաները գոհ ընելու, և նոր պաշտօնեաներ աւելցնելու դարձարար գորութիւն պիտի գանէ Պատրիարքարանի մէջ :

ՅՕՊԱՆԵՍԱՆ Մ. ԷՅՄ. — Չեմ գիտեր թէ մինչև հիւսկ եղած է, բայց սակէ վերջ այդպիսի բաներ չիրտար անդի ունենալ մինչև օր հոս չգայ :

ՍԵՂԱՃՅԱՆ Մ. ԷՅՄ. — Երկու երեք հարիւր սակոց խնդրոց մը համար այսչափ խօսքեր ընել ի՞նչ կը նշանակէ : Մեզք է այս տղային :

ԶԵՐԱԶ Մ. ԷՏԻ. — Բնոր ըսածներն ալ
Ենթադրական տեսարեւ զրոյ Հիմնուած են :

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Խ. ԷՏԻ. — Ի՞նչ ըսել է
քսան տարիներէ ի վերէ որ շարունակ կը խօս
տիք, և ի՞նչ կրցար շահիլ խօսելէն. բիշ մ'ալ
գործնական մարդիկ ըլլանք :

ՅԱՅՆԵՐ — Թողէ՛ք որ խօսի :

(Աղմուկ եւ շփոթութիւնք)

(Ատենապետ է ֆէնտի 'ի ձայն դանդակի կը
հանդարանցնէ ժողովը եւ կը հրաւիրէ որ թո
ղուն Ատենաբանին շարունակել իւր խօսքը, եւ
այսպէս 'ի կարգին պատասխանեն նորա առար
կութեանց, առանց որչա՛ր ազատ վիճարանու
թեանէ սպասուած լոյսն յախտնարար չի կըր
նար ծաղիլ այսպիսի կարեւոր խնդրոյ մը վը
րայ որ երեք նիստէ 'ի վեր կըրադեցնէ զժո
ղովը — Եւ կը հրաւիրէ զԱտենաբան է ֆէնտիին
որ զգուշանայ խնդրոյն ուղղակի յարակցու
թիւն չունեցող զէ պրերու վրայ ծանրանալէ)

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՏԻ. — (Շարունակելով)
Մեր յարուցած խնդիրը էսպէս Ազգային ժո
ղովոյ որոշմանց գործադրութեան պահանջուին
է : Ատենագրութիւններէն կրնամ քաղիլ եւ
բազմաթիւ օրինակներ ցուցնել թէ, Ազգային
Ժողովոյ որոշումներ ի՞նչ տեսակ ընդունելու
թիւն կը դանեն Պատրիարքարանի մէջ : Սա
կայն թողունք ասոնք : Ներկայ վիճարանու
թեան առարկայն դաստիարակութեան խըն
դիրն է, որոյ պիտոյք ամեն կողմէ ճանչու
ած է. իսկ գործադրութեան մասին միշտ
արգելիլ հանդիպած է, սա առարկութեամբ
թէ զբաւ չ'կայ որ անոր ալ տրուի . իսկ ես
անա հաստատեցի թէ զբաւ կար, բայց չ'տըր
ուեցաւ, այն համոզմամբ թէ Կեդր. սնտուկի
հասոյթք Պատրիարքարանի պաշտօնէից եւ այլ
ներքին պիտոյց սեփական են :

Ուրիշ հասնողում մ'ալ կայ : Պատրիար
քութիւնը եւ Պատրիարքարանի պաշտօնն յա
րաբերական գործերն կը նկատուին, ուստի
Կեդր. սնտուկի բոլոր հասոյթք եւս յարաբե
րական պաշտօնէից եւ գործոց սեփական նը
կատուած են :

Այս ըմբռնումներն միայն են, եւ ասոնց
դէմ պէտք է մարտնչիլ : Յայտնի է թէ Պատ
րիարքարանի յարաբերական գործերն գլխա
ւորաբար մեր դաւառացի եղբարց վիճակին
նկատմամբ են : Ըսի վերջնից նստին մէջ եւ
բացատրեցի թէ, այդ մասին բոլոր ըրածնիս
կամ գրաւոր եւ կամ բերանացի միջնորդու
թիւն մ'է : Եւ այս միջնորդութիւնն ալ մեծ
արդիւնք մը յառաջ է՛ն բերած : Սակայն գա
ւառացի եղբարց վիճակն դարձանելու ներքին
աշխատութիւններ ալ վնաս, զորս ժամանա
կին քննած եւ ընդունած է այս Ազգային
Ժողովը : Ահա Ձեզ կը ներկայացնեմ ատենա
գրութիւն մը, որ կը պարունակէ Հարստահա
րութեանց տեղեկագիր մը : Այս տեղեկագիրն
ստորագրեալ է Տ. Ներսէս Նոյիսիպոսէ, Ա.
Նաջնբոզէ Նիկոսիզիւր, որ Ատենապետն էր
նոյն Յանձնաժողովոյ եւ ես Ատենապետի
1874 Հոկտեմբեր 8 թուականին մատուցեալ
է առ Ազգային Ժողովն : Տեսէք ի՞նչ կեզրա
կացնէ այս տեղեկագիրն « Գաւառներէն եւ
կամ Հարստահարութեանց Հանրադրերն ուշի
ուշով քննողին անհար է որ անաջին մտա
ծութիւնն այս չ'ըլլայ թէ՛ տղիւտութիւնն է
գլխաւոր պատճառ ամենայն շարեաց » : Նոյն
տեղեկագիրն կ'ըսէ դարձեալ . « Ազգայնոց
ընդհանուր վիճակն ըստ արժանաւորն քննելու
եւ վիճակագրելու պէտք կայ . — Սկեզեցա
կան պաշտօնէից պիտոյքը խիստ մեծ է, բազ
մաթիւ գիւղեր ու քաղաքներ ալ զուրկ են
ճշմարիտ վարչապետութեանէ, որուն չնորձը
թերեւս վերադարձնելու ալ հասնի . — Սկե
զեցիք, վանորայք եւ ամենայն կայուածք եւ
այլ ընդհանուր արձանագրութեան առնելու
եւ արահովելու պէտք կայ : Նոյն տե

ղեկադրին այս եղբակացութիւններն , որ մանրադնին քննութեան մը արդիւնք են , 1879 ին վերստին նկատողութեան առնուեցան , եւ դատարարակութեան ու դատական այցելութեանց եւ հովուութեանց պիտոյից ստիպողականութիւն արուելով , 50,000 զբէր գումարներ յատկացուեցան անոնց . բայց զժաղաքար անդործադրելի մնացին այդ որոշումներն :

Ձեռքս անյաւ Գլոտ — Կէօ անուն տետր մը , զորմ Վիկթօն — Հիւկօի եւ Թարգմանութեամբ Խաչիկ Ստեան էֆէնտի : Այս թարգմանութիւնն համառօտ վերջաբան մ'ունի , թարգմանչէն գրուած . կ'ուզեմ զայն եւս ներկայել , գիտնալով թէ Ձերազ էֆէնտի մեծ յարգանք ունի առ Ստեան գերդաստանն :

« Վիկթօն — Հիւկօյի հեղինակած Քըլօտ Կէօն թարգմանել ու հրատարակելով Ազգերմուս ծառայութիւն մը մատուցանել կը կարծեմք :

Տիեզերահաշակ Բանաստեղծին հըզօր ու լուրջ խօսքերուն վրայ մեր կողմէն ուրիշ խորհրդածութիւնք աւելցնել բոլորովին անօգուտ եւ անտեղի կը համարիմք :

Սակայն՝ երկու խօսք միայն : Թշուառութիւնը ամեն ազգի , ամեն ժողովրդոց մեծամասնութեան քիչ կամ շատ բաժինն է եղած :

Տգիտութիւնն է միշտ եւ ամեն ուրէք գլխաւոր եւ թերեւս միակ պատճառ թշուառութեան :

Բարձ տղիտութիւնը ազգի մը կամ ժողովուրդի մը մէջէն եւ ահա կը բառնաս թշուառութիւնը :

Որ Ազգն որ նուազ ազէտ է՝ այն ազգը նուազ թշուառ է եւ աւելի հզօր :

Մեր Ազգը , սրտերնիս կը հողեկարի երբօր կ'ըսենք զայս , խիստ քիչ զարգացում առած է տղիտութեան ու դաս-

տարակութեան մէջ , հետեւաբար խիստ շատ թշուառ է այսօր :

Ազգին այսօրեայ վիճակին մէջ մեր բոլոր ջանքը , մեր բոլոր ծախքը մէկ բանի համար պէտք է ըլլայ — Դատարարակութիւն : Ցաւալի է տեսնել որ մեր երեսփոխանական Ժողովը ամեն բան կը հողայ , ամեն բանի վրայ կը խօսի , կը վիճարանի բայց 'ի դատարարակութենէ : Ասոր համար ամուլ են ու ամուլ պիտի մնան իր բոլոր վիճաբանութիւններն ու իր բոլոր ջանքերը :

Երանի թէ Վիկթօն — Հիւկօի իր աղքային երեսփոխանայն ուղղած խօսքերը արձագանգ մը գտնէին մեր երեսփոխանաց սրտերուն մէջ » :

Ուրիշ վկայութիւններ ալ ունի պատրաստ , բայց զանց կ'ընեմ :

Ստեան Խաչիկ էֆէնտի կ'ըսէ , մեր բոլոր ջանքը , մեր բոլոր ծախքը մէկ բանի մը համար պէտք է ըլլայ , այն է դատարարակութեան համար : Կը յուսամ որ Ձերազ էֆէնտին չ'հետեւցնէր թէ , Ստեան Խաչիկ էֆէնտի ալ կ'ուզէ , Պատրիարքարանը ջնջել :

Ո՛չ , Տեսրք երեսփոխանք , ո՛չ , մենք Պատրիարքարանը չենք ուզեր ջնջել , այլ զայն բուն իր պաշտօնին բարձրացնել . Պատրիարք եւ Պատրիարքարան կը կործեն թէ միայն աղքիկ յարտերական գործոց պաշտօնեայն եւ պաշտօնատունն են . ո՛չ երբէք : Ազգային Սահմանադրութեամբ ուրիշ պաշտօններ ալ ունին , Ազգային դատարարակութեան հսկելու , վարժապետ եւ վարդապետ պատրաստելու , կրօնական գագաթներ զարգացնելու եւ այլն : Թէև այս պաշտօններէն ոմանք կրօնական ժողովոյ , եւ ոմանք Ռուսմտական Խորհրդոց յատկացեալ են , բայց տանց ըրածն խորհրդակցութիւն եւ խորհրդատուութիւն մը կ'ընայ ըլլալ . Պատրիարքական իշխանութեան վրայ կեդրոնացեալ են ազգային առանձնաշնորհումներն , եւ Պատ-

րիարքն է ազգային գործադիր իշխանութիւնը : Պատրիարքը միութանակ իրրև շնորհ մը իւր Նախագահութիւնը տարւ Ոստւմնական Խորհրդոյ , իրրև շնորհ պիտի ընդունի անոր գործաւցուցութիւնն ազգային դաստիարակութեան պաշտօնին մէջ : Երբ Կրօնական Ժողովն հարցման ենթակայ ըլլայ թէ ի՞նչ գործեց կրօնական զարգացումն ազգայնոց մէջ ծաւալելու , եկեղեցեաց պայծառութեան և եկեղեցականաց բարեկարգութեան համար , Պատրիարքը զերծ չէ այս հարցումէն , այլ առաւել քան զիրօն Ժողովն պատասխանատու է , ոչ միայն իրրև գործադիր իշխանութիւն , իրրև Տէրութեանն հաստատեալ միակ իշխանութիւն , այլ և իրրև Սահմանադրութեան անթերի գործադրութեան պատասխանատու և երբուեալ իշխանութիւն . քանզի երբ Կրօնական Ժողովոյ , Քաղաքական Ժողովոյ , Ոստւմնական Խորհրդոյ և այլոց վըրայ տեսնէ իրենց պաշտօնին և պարտաւորութեանց անհազու թիւն , պարտի ազգարարել անոնց և ՚ի հարկին ղիմել զերագոյն իշխանութեան , զանոնք լուծելու համար , ո՛ր մնաց որք ինք արգելք ըլլայ անոնց խորհրդոց և ուրոյմանց : Պատրիարքի պաշտօնին ու պարտաւորութեանց այս սկզբնական կէտերը լաւ բայտրութեան կարօտ են , որպէսզի լաւ ընթրուին , և ոյլ ևս թիւրիմացութեանց ու սխալ համոզմոնց պատճառաւ ազգային կենսական պիտոյք զանց չ՛առնուին :

Ինչպէս Պատրիարք ու Պատրիարքարան ոչ միայն յարաբերական գործոց , այլ և ազգային դաստիարակութեան և կրօնական գործոց ևսյն պաշտօնէութիւնն և պաշտօնատուն են , ոյսպէս Կեդր. սնտուրի պարտի այդ պիտոյնց տնտնով ևս վճարումներ ընել , և ազգային Ելմտացոյց մը որ այս կենսական պիտոյնց համար իր մէջ գումարներ չի պարունակիր , ազգային Սահմանադրութեան հակառակ պատրաստեալ պէտք է նկատուի :

Ամբողջելով խօսքս , կ'եղբակացնեմ թէ , իրաց արդի կացութիւնն , և դաստիարակու-

թեան խնդրոյն վրայ Կայսերական Կառավարութեան դարձուցած խորին ուշադրութիւնն ևս նկատուցութեան առնելով , մեր առանձնաշնորհեալ իրաւունքներն պահպանելու և ինքնին ՚ի գործ դրած ըլլալու համար կ'առաջարկեմ հետեւեալ բանաձևն ՚ի քուէարկութիւն :

Ազգային Ժողովն կ'ընդունի թէ՛

1. Սրբազան Պատրիարքն ո՛չ միայն յարաբերական գործոց , այլ և կրօնական գործոց և ազգային դաստիարակութեան պաշտօնեայն է և պատասխանատու ընդ կեդր. Վարչութեան :

2. Կեդրոնական սնտուրի ո՛չ միայն յարաբերական գործոց , այլ և կրօնական գործոց և ազգային դաստիարակութեան համար պարտաւոր է վճարումներ ընել և ըստ այնմ կը սահմանուի Ելմտացոյցը :

3. Անուանել Թանձնաժողով մը , որոյ պաշտօնն ըլլայ այս սկզբանց համաձայն պատրաստել նոր Ելմտացոյցը , խորհրդակցութեամբ Վարչութեան :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՅ — (Բեմն Ելեկով)

Քիչ մը ակարութիւն ունիմ եւ ձայնս ալ չ'ելնեմ , ուստի կը խնդրեմ որ Պատ. Երեսիխանք չ'ընդ միջնն զիս :

Ես չ'պիտի խօսիմ Վարչութեան կողմանէ եկած Տեղեկազրին ղէմ եւ ոչ համարակալութեան Դիւանի տեղեկազրին ինք պատ , այլ միայն իմ ունեցած փորձառութեամբս պիտի խօսիմ դաստիարակութեան եւ Ելմտացոյցի կարեւոր խնդրոց վրայ , եւ ցոյց տամ թէ ասկից 40-50 ասարիներ յառաջ Ազգն ունէր ուստւմնաբաններ եւ թէ իւր Ելմտացոյցն կը պատրաստուէր առելի ապահով հիմանց վրայ :

Ոմանք յ'Երեսիխոնաց կ'առարկեն թէ մեզ կեդր. վարժարան պէտք է՛ եւ թէ ի Պատ-

րիարքարան մտած հասոյթը հարկէ որ նոյն հաստատութեան ծախուց յատկանան :

Պէտք է գիտնալ թէ՛ երբ ես տակաւին տղայ էի, ազգն 'ի Մայր-եկեղեցի թաղ. կեդրոնական վարժարան մ'ունէր Ուսումնարան անուամբ, Մայր-վարժարանէն 'ի զատ և ուսկից ելած աշակերտք ոմանք այսօր վարժապետ, վարդապետ, քահանայ կամ երեւելի եւ աղջիկն օգտակար անձինք եղած են, ինչպէս են Տ. Գրիգոր քահանայ Աճէմեան, Տ. Արիստակէս քահանայ, Տ. Գէորգ քահանայ Մայր-եկեղեցոյ, Գէորգ կաթողիկոս, Գալուստ պատուելի Տ. Պօղոսեան եւ այլք որք Սամաթիոյ Ա. Գէորգ վարժարանին մէջ իրենց ուսման շրջանն աւարտելով, վարժապետական ուսմունք առին, եւ որոց մի քանիներէ դասընկերներս էին, թող որ ուրիշ թաղերէ աւարտած թիւ ուսանողք կը յաճախէին նոյն վարժարանն որոյ Ուսումնապետն եւ Հայերէնի դասատուն ֆէշտրմալճեան Գրիգոր պատուելին էր. թող որ Իտալերէնի, Գաղղ. եւ Անգլիերէնի դասատուներ ալ կ'երթեւեկէին, հասակաւոր աշակերտաց համար :

Գալով կրթ. Տեսչութեան խնդրոյն, իմ Սամաթիոյ դպրոցի աշակերտած ժամանակս Ազգ. կեդրոնին կողմանէ կրթ. Տեսուչ էին՝ Մատթէոս վարդապետ քարոզիչ Միջազիւղի, Պետրոս վարդապետ Ալթունեան, եւ Տէտէ Յովնանէն վարդապետ քարոզիչ Խաղիւղի. ֆէշտրմալճեան Գրիգոր պատուելի եւ Թագուր յարժապետ ընդ որս եւ այլք, որք պաշտօն ունէին այցելել բոլոր վարժարանները եւ ուսման ընթացից եւ վարժապետաց փոփոխութեան վերայ ուղղակի հսկողութիւն ընել : Եւ Պէղճեան լուսահողի Ամիրան 2000 զրշ. ի կտակաւ ամսական կապած էր սոյն վարժարանին. ըսել է թէ Ազգն ասկից շատ տարիներ առաջ ալ ունի եղեր ուսումնարաններ եւ կը ճանչնայ եղբր անոնց յարգն ու կարեւորութիւնն . . :

20 ՊԱՆԵԱՆ Մ. ԷՅ. — Հընդմիջմամբ

Գատիարակութեան և ուսումնարանի դէմ խօսող Հ'կայ արդէն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Ըսուեցաւ թէ 1834 ին վարժապետանոց եւ կրթ. Տեսչութիւն Հ'կար Անգղիոյ մէջ իսկ, ասոր համար է որ ցոյց տալ ուղեցի թէ՛ մեր Աղջիկն մէջ 1828 թուականէն կար թէ՛ վարժապետանոց եւ թէ՛ կրթական տեսչութիւն :

ՁԵՐԱԶ ԷՅ. — Դրամականին վրայ խօսեցէ՛ք, Քրիստոստուր էջֆէնտի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Համբերեցէ՛ք, Ձերազ էջֆէնտի, հոտ ալ սխալ դամ, բոց կարգաւ :

Գալով դրամական խնդրոյն, Սահմանադրութեան հաստատութենէն առաջ, աղբային տուրքերը կը հաւարուէին եսնաճ դասուն միջոցաւ, տնանկ աղքատ, դպրոց և ճիւղան դանոց անուամբ և նոյն երեք պիտոյից կը յատկանային, իսկ Մոսխարալի դրամն Պատրիարքութեան, Քարու-բէճեասիի և մուրվալիին յատկացած էր և զանցայիբի դրամն Պատրիարքութեանի դրոգեր պաշտօնէից : Տարեկան 60,000 զուրուշ աղբատայ կը տրուէր, 60,000 զուրուշ դպրոցայ, 30,000 զուրուշ պատահական տնանկներու և 30,000 զուրուշ ալ Հիւանդանոցի : Եւ երբ եսնաճ դասն, այսինքն ժողովուրդն կը տեսնէր թէ իւր տուած դրամն աղբատայ, դպրոցայ և Հիւանդանոցի կը տրուի, կը փութար յօժարակամ նուիրել իւր լումայն :

ԱՐԵԱՎՈՒՆԻ Յ. ԷՅ. — Այժմ ալ կործեմ թաղ. խորհրդոց ձեռամբ կը կատարուի այդ զանձուր :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Բոց թողէ՛ք որ շարունակեմ :

ԱՐԵՎԱԳՈՒՆԻ Յ. ԷՖ. — Քանի որ, Ղաղարուսեան էֆէնտի, անցեալ պատմութիւններ կ'ընէք անշուշտ զմեզ լուսարաներու համար, աւտի և մենք իբրև նորեկք՝ իրաւունք ունիր հարցումներ ընել, ծանօթութիւններ առնուլ և հետևաբար պէտք չէ ընդմիջում նկատել մեր սրտիչ հարցումներն :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (շարունակելով) Կ'ըսէի թէ՛ այն ժամանակները ժողովուրդն յժարակամ և սիրով կը վճարէր իւր ազգային տուրքն, սրովհետև ո և իցէ մարդ զբամ կուտայ փոխարէն սպրանք մը առնելու և անկից շահ մը ակնկալելու նպատակաւ : Նոյնպէս սպրանք կուտայ մէկն, և զբամ կ'առնու այդ զբամէն շահելու համար և կեղք. սնտուկի այդ գումարներ հանգանակողք իրենց շահեր իրականապէս կը տեսնէին անոր մէջ, սրովհետև իրենց ազգական ազբատաց ամեն ամիս կը վճարուէր և իրենց կարօտ ազգահանաց դատակներ կրթութիւն կ'առնուին ծրարապէս : Եւ այդ պատճառաւ տարեկան 300,000էն աւելի ազգային տուրք կը գանձուէր և այդ զբամն յանուն տնանկ աղքատի, զպրոցի և ճիւղանդանոցի կը գանձուէր : (Առ Զօպանեան ԷՖ.) Զօպանեան էֆէնտի, եթէ ձեր լուսահոգի հօր թղթերն մի անգամ աչքէ անցնէք, պիտի տեսնէք որ ազգային տուրքի վճարման անդուրազներն յանուն զպրատանց, անանկ սոքոտաց և Հիւանդանոցի են :

Իսկ այսօր ազգային այդ սնտուկն, փոխանակ ույզ անուամբ ճանչցուելու Պատրիարքարանի սնտուկ անուամբ ճանչցուած է, որ սխալ է, և ահա այս է պատճառն որ Ազգն այժմ կը զլանայ իւր ազգային պարտքն վճարել, համոզուած լինելով որ հոն մտած զբամն միայն զպատրիարքարանի ծախուց կը գործածուի իբրև ոտտիկանական եւ յարտերական ծախք :

ՀԱՆԱՃԱՆՆ Բ. ԷՖ. — [Անդամ Քաղ. Ժողովոյ] Այդ Ձեր մասնաւոր համոզումն է, Քը-

րխոտոտուր էֆ. այժմ ալ Պատրիարքարանի արկղն կեղք. սնտուկ անուամբ ճանչցուած է :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես ն նպատակաւ Համարակալութեան Կիւսի տեղեկագիրն չէ որ կը մատարանեմ ըսի, այլ լսի իրաւութիւններ են որ կը ներկայացնենք Ձեզ՝ բազմապատկով Ազգին անցեալ փիճակն և բունածուղղութիւնը ներկայիս հետ : — (Շարունակելով) Կըսէի թէ մեր նախնիներն համոզուած էին որ իրենց տուած զբամն, Հիւանդանոցի, սոքոտաց և զպրոցաց և այլ ազգային կարեւոր նպատակներու կը յատկանար, հետևաբար սիրով կը վճարէին, զի զիտէին թէ իրենց մէկ բակէն ելածն միւս քսակը պիտի մտնէ : Այն ատեն Ազգային սնտուկն էր որ Պատրիարքարանի զբամ կ'ուտար և ոչ թէ Պատրիարքարանը ազգային կրթական պիտոյց : Մինչև անգամ Գէորգ Պատրիարք այն ժամանակ աշխատեցաւ Հիւանդանոցի յատկացեալ իլմուխապէրի և նշանաւորութեան հատոյցներն Պատրիարքութեան յատկացնել, աւարկելով թէ իւր ամասկանն սնտուկական է, և չէ կարող անկից բաժին հանել նաև Քարու-բէհետի, և այլ ծախուց : Բայց չ'յաջողեցաւ և ինկաւ Պատրիարքութենէ, թէ և վերջէն սոմանք կարող եղան այդ զբամներ կորզել Հիւանդանոցի արդիւնքն և Պատրիարքարանի յատկացնել :

(Զանազան նստասաններէ ղիտողութիւններ)

ՀԱՆԱՃԱՆՆ Բ. ԷՖ. — Միթէ այն թուականին Սահմանադրութիւն կ'ար :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ո՛չ. այս ըսածներս Սահմանադրութեան հաստատութենէն առաջ էին :

Վերջապէս եղրակացնելով խօսքս, կ'ըսեմ թէ եթէ կուզիք շահեցնել այդ կեղքուական սնտուկն, եւ ազգային տուրքերն զիւ-

լուծեամբ գանձել, պէտք է ցոյց տանք ժողովուրդին թէ՛ իւր տուած գրամովն զպրոցներն ալ պիտի հողաւք, աղքատներն ալ եւ թէ՛ առանց այս պայմանանց կարելի չէ կեդր. Սնտուկի վիճակին բարձրացնել եւ Աղղէն զբարամ ստնուլ :

20 ՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ.— Բայց նախ պարտք եւ ապա իրաւունք :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— (Պատասխանելով) Յի. այդպէս չէ, նախ պէտք է որ դուք ձեր պէտքերն ցոյց տաք Աղղէն, որպէս զի նա եւս այդ պիտոյից գոհացում տայ : Աւել լորղէն տալ ուղիւն հարուած մ'է :

22 ԵՐԱԶ Մ. ԷՖ.— Ձեր այդ ըսածներն, Ղալարոսեան էֆ. ոչ թէ փորձառութեան արդիւնք են, որպէս կը յայտարարէիք, այլ լոկ վերացական խօսքեր :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Իմ այս խօսքերը իրական են եւ ոչ վերացական, որպէս կը կարծէք : Այս ցոյց տուած եղանակաւ հարկ է զիմն ժողովրդեան :

ՍՐՎԱՋԵԱՆ Կ. ԷՖ.— (Բեմն ելնելով) Զբարձր խօսիմ դատարարական խնդրոյն վերայ, վասն զի արղէն մինչեւ ց'արդ խօսող Ատենաբանք թուեցին եւ բացատրեցին անոր օգուտներն, եւ մեր մէջ չ'կայ ոչ որ չընձամոզուի եւ տարակարծիք գտնուի առ այդ :

Ես վեր ի վերոյ հաշուով մը գտած եմ թէ Աղղէն այսօր շուրջ 50-60,000 ոսկւոյ գումար մը կը ծախսէ ի նպաստ դատարարական եւ եթէ այս պատկասելի գումարն նշանակուած ըլլար մեր Ելմտացոյցի ճակատն, անշուշտ գոհացում պիտի տար ընդ զիմարանից :

Գալով բուն խնդրոյն, մեր ընդ զիմաքաններէն փախազեան էֆ. քիչ մ'առաջ կ'ըսէր թէ, Պատրիարքարանն չ'օղէր դրամ վճա-

րել դատարարական հաւար. եթէ այդպէս է, ապա ուրեմն խնցաւորն ոչ թէ Պատրիարքարանն է, այլ այս Աղղային ժողովն, վասն զի սա իւր վերին եւ օրհնողիւր մարմինն ինչպէս եղեր է որ 20-24 տարիներէ 'ի վեր չէ կրցեր խօսք հասկցնել Պատրիարքարանին . . . :

ՓԱՓԱՋԵԱՆ ԵՒ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ԷՖԲ.— (Ընդմիջմամբ) Աղղային ժողովն այսքան տարիներէ 'ի վեր միշտ պնդեր է, բայց չէ կրցեր խօսք հասկցնել :

22 ԵՐԱԶ Մ. ԷՖ.— (Առ ընդմիջող երեսփոխան) Մանուկ էի, մեծցայ եւ տեսայ թէ աղղին մէջ խորուած ձգելէ զաս ուրիշ բան բնաւ ըրած չ'ունիք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— (Առ Զերազ էֆ.) Շատ պատասխաններ ունիմ, բայց դուք ալ գիտէք թէ՛ այսօր ժամանակը չէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կը իշեցնեմ ընդմիջող երեսփոխանացդ որ պիտի պարտաւորիմ օրինաց գործադրութեան զիմել եթէ անձնական ակնարկութիւնք չարուեսակեն :

ՍՐՎԱՋԵԱՆ Կ. ԷՖ.— (Շարունակով) — Այո՛, կըսէի թէ, ինչո՞ւ այս ժողովս ց'արդ մասնաւոր օրէնք մը չէ գծած ելմտացոյցի պատրաստութեան եւ հաշուական խնդրոց մասին, եւ ինչ ծիծաղելի բան՞որ 3—4 ամիսներէ 'ի վեր պիւտնէի մը վրայ կը վիճաբանիմք որ պարզ ելու մտից ցուցակ մ'է եւ ոչ թէ մեր գիտացած պիւտնէն, թողով մէկ կողմ միւս կենսական խնդիրներն, եւ չենք կրնար յանդիլ եզրակացութեան մը : Մի քանի ատենաբանք իրենց յնադատութեամբք այնպէս մը ցոյց տալ ուղեցին, իբր թէ Պատրիարքարանի աղղեցութիւնն տիրացած եւ հետեւաբար անկից գրուած պաշտօնագրերն անզոր են. բայց պէտք է զիտնալ թէ՛ երբ այս Աղղային ժո-

դռնս աշխատի իւր Պատրիարքին եւ վարչութեան զիրքն բարձրացնել, յայնժամ անոնց կողմէ եղած ո եւ է որոշում եւ զիր աւելի յարգ կ'ըստանայ պաշտօնական մարմնոց եւ Ազգին առջեւ : Եւ ընդ հակառակն որչափ խճճեմք զնոսա եւ քննադատեմք անոնց մէն մի արարքն, այնքան կը սկարացնեմք անոնց իշխանութիւնն եւ վարկը :

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ.— Իրաւունք ունի Սրբաճեան էֆէնտի . Պատրիարք հալածեմք Ազգն հալածել է :]

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— (Առ Զերազ ԷՖ.) Պատրիարքներն Ձեզ նման արարածներ իրենց վաստաբան կարգելովն է որ այս ժողովս ըստրուկ ըրած են . շողքորթի :

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ.— (Առ Փախազեան ԷՖ.) Ձեր ուղած Պատրիարքն արգեօք ո՞ր ջըբո՞ւրքն իրն շինել տալու է, վասն զի ամեն եկող Պատրիարքաց զէմ ալ այդպէս վարուած էք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Փախազեան էֆէնտի, կը ցաւիմ որ Ձեր ընդդիմառանից պատասխանելու միջոցին բեմէն ըրած յայտարարութիւններուդ հակառակ, այն պահուէն ձեր ցոյց տրուած պաղարկնութիւնն այժմ այն աստիճան ջերմութեան վերածեցիք, որ կը պարտաւորէք զԻրական զձեզ ալ ի կարգ հրաւիրել, — Շարունակեցէք Սրբաճեան էֆէնտի :

ՍԸՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ.— Խօսքս վերջացնելէ առաջ, չեմ ուզեր լռութեամբ անցնիլ մասնաւոր պարագայ մը :

Ձերազ էֆէնտի պահ մ'առաջ դատարարակութեան մասին արդի երկտասարդութեան եռանդն յիշեցնելու ատթիւ յ'անուանէ յիշատակեց Սրբակունի էֆէնտիի եւ իմ անունս ես իմ մասիս ընաւ չ'էի փախաքէր այս տեսակ յիշատակութիւն մը, զի մեք չէինք որ

առանձինն աշխատեցանք Միացեալ ընկերութեանց հաստատութեանն համար, այլ հարաւոր երկտասարդաց չեա . . . :

ԱՐԵԱՎՈՒՆԻ Յ. ԷՖ.— Որոնց չեա չ'էր փախազեան էֆէնտին :

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ.— Միթէ դպրոցական խնդրոց մէջ փախազեան էֆէնտի նուա՞ղ աշխատութիւն ունեցած է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ — Կը խնդրեմ, թողէք Ատենարան էֆէնտիի վերջացնել իւր խօսքն :

ՍԸՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ.— Կըսէի թէ հարաւորաւոր երկտասարդաց չեա գործեցինք եւ Ազգընջալեցեալ մեզ, ուստի անիրաւութիւն կը համարիմ միայն մեզ վերագրել այդ կրթական դործն :

Ուրեմն վերջացնելով խօսքս, սա հետեւեալ առաջարկութիւնն կը ներկայեմ Պատ. ժողովոյդ ընդունելութեան :

« Ազգային Ժողովն »

« 1. Կը վաւերացնէ նոյնութեամբ, վարչութեան բերած սովորական հասութից եւ ծախուց ցուցակը :

2. Կընտրէ Յանձնաժողով մը պատօն տալով նմա . Ո. Ելմտական օրէնք մը պատրաստել . Բ. Քննել թէ ինչ են այն պատճառներն, որք արգելք եղած են Տրոց կանոնադրին ճշդիւ դործադրման, եւ առաջարկել եթէ հարկ կայ, բարեփոխեալ կանոնադիր մը . Գ. Առաջարկել Ժողովոյս այն դուռմարներն զորս պարտ է սահմանել ելմտացոյցին մէջ, դատարարակութեան, կրօնական ժողովոյ, դաւառտական հովուութեան պիտոյցից համար » :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Երեսփոխան Տեարք, Ժողովոյս փակման որոշեալ ժամուն տակաւին տանս վայրկեան կ'ուզէ: Եւ մեր խօսից տու մարին մէջ Ց—Գ խօսք ուզող երեսփոխանաց անուանք նշանակուած են, որոց առաջինն է Թնկրեան Աւետիս էֆ. . . :

